Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 1402 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887 (Ն. Տ.) 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887 1 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1305

20 ՓԱՐԱ (ԾՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՂՐԿԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكیان خاننده آرەولك
غزته‌سی ادارەسنه

**Direction du journal AREVELK**
*Noradounghian Han, Galata*
CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ԾՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան | դաշեկան արծաթ | | 160 |
| » » Վեցամսեայ | » | » | 80 |
| » » Եռամսեայ | » | » | 40 |
| Գաւառաց համար եւ տեղական Թղթատարով տարեկան | » | » | 240 |
| Գաւառաց համար եւ տեղական Թղթատարով վեցամսեայ | | | 120 |
| Օտար երկիրներ, տարեկան | Ֆրանք | | 56 |
| » վեցամսեայ | | | 28 |

Դուրս գրկուած լրագրոց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է.
Խմբագրութեանս ղրկուած Նամակ կամ գրուածք ետ չդարձուիր.

**Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople**

Կ. ՊՈԼԻՍ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1887

# ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԺԻԶՈՒԻԴՍՅ ՄԱՐԴՈՐՍՈՒԹԻՒՆՆ ՕԳՏԱԿԱ՞Ր Է ՕՍՄԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Այս հարցումը կը հարկադրէնք ընել, տեսնելով թէ Ճիզուիդք կը կրկնապատկեն իրենց փրօփականտայի ճիգերն Օսմ. Տէրութեան այլ և այլ նահանգաց մէջ. տեսնելով թէ զանազան անյուսալի կողմերէ քաջալերութիւնք և դիւրութիւնք կը տրուին անոնց գործունէութեան, և տեսնելով թէ Ճիզուիդաց արարքն ու ընթացքն արդէն ո՛չ սակաւ խնդիրներ յարուցած են ի մէջ Պատրիարքարանաց և Բ. Դրան.

Որոշելու համար թէ Ճիզուիդաց մարդորսութիւնն օգտակա՞ր է Օսմ. Տէրութեան թէ ոչ, պէտք է նախ սահմանել Ճիզուիդաց գործունէութեան բնութիւնն.

Արդ, իրազեկք գիտեն թէ Ճիզուիդք պարզապէս կրօնքի մը տեղ ուրիշ կրօնք մը չեն դներ. Անոնք ո՛չ միայն Արեւելեան Եկեղեցւոյ մը տեղ Արեւմտեան Եկեղեցի մը կը ջանան հաստատել, այլ և կ'աշխատին ազգութեան մը տեղ ուրիշ ազգութիւն մը դնել, և քաղաքական ազդեցութեան մը տեղ ուրիշ ազդեցութիւն մը զետեղել Թուրքիոյ մէջ.

Ճիզուիդք լոկ Պապականներ չեն շիներ, այլ և լատինամիտ հասարակութիւն մը, լատին ազգութիւն մը կը կազմակերպեն մեր երկրի մէջ. Իրենց քարոզութեամբք, վարդապետութեամբք, սովորութեամբք և յարաբերութեամբք կը վարժեցունեն իրենց յարող Արեւելցիները՝ մոռնալու այն արեւելեան ազգութիւն որում կը վերաբերին և զինքեանս նկատելու իբրեւ արեւմտեան ազգութիւն մը, ընդ պաշտպանութեամբ Ֆրանսայի, Աւստրիոյ և Իտալիոյ.

Պապականութիւն մուծանելու պատրուակին տակ, Ճիզուիդք մեր երկրի մէջ կը մուծանեն Եւրոպիոյ կաթոլիկ Տէրութեանց քաղաքական ազդեցութիւնն, իբրեւ անխուսափելի հետեւանք լատին հասարակութեան հաստատման, աճման և զօրացման ի Թուրքիա.

Այս ճշմարտութիւն կարօ՞տ է մանրակրկիտ ապացուցման.

Արդ, Ճիզուիդք, լատինականութիւն և եւրոպական քաղաքական ազդեցութիւն հաստատելով Թուրքիոյ մէջ, Օսմ. Տէրութեան շահուց համար օգտակա՞ր գործ մը կը կատարեն.

Դժբախտաբար, մեր սիրելի երկրին քաղաքական պատմութիւնը կեցած է հոն՝ ցոյց տալու համար թէ եւրոպական Տէրութեանց միջամտութիւնք ընդհանրապէս, և լատին ու կաթոլիկ Տէրութեանց միջամտութիւնք մասնաւորապէս, ո՛րպիսի չարիքներ հասուցած են Օսմ. Տէրութեան.

Լիբանանու աղէտալի խնդիրը կը ծագէ՞ր այնչափ սաստկութեամբ և Օսմ. Տէրութեան համար այնչափ վիրաւորիչ կերպիւ, եթէ Լիբանանու կաթոլիկները զինքեանս չնկատէին ընդ հովանաւորութեամբ հզօր կաթոլիկ Տէրութեան մը, և եթէ Ֆրանսա, իբրեւ կաթոլիկ Տէրութիւն, շահաւոր և պատուաւոր չտեսնէր զինու զօրութեամբ միջամտել ի Թուրքիա, իբրեւ պաշտպան Թուրքիոյ լատին և կաթոլիկ բնակչաց.

Եւ ի՞նչ տեսութեամբ է ապաքէն որ այս օրս իսկ Ֆրանսա յատուկ ուշադրութեամբ մը կը դիտէ զՍուրիա, և թէ՛ յայտնապէս և թէ ձեռքի տակ ամեն քաջալեր կուտայ կաթոլիկութեան և լատինականութեան զօրացման ի Սուրիա և ի Կիլիկիա.

Կրնա՞յ ըսուիլ թէ Ֆրանսայի այժմեան անկրօն Կառավարութիւնը կաթոլիկ կրօնքին յաղթանակը տեսնելու քրիստոնէական սուրբ եռանդեամբ կ'այրի ու կը տոչորի. Բայց ինչո՞ւ համար Ֆրանսա այնչափ հոգ կը տանի կաթոլիկութեան և լատինականութեան ծաւալման և զօրացման Թուրքիոյ մէջ.

Կրնա՞ր ըսուիլ թէ Կամպէդդա կը սիրէր կաթոլիկութիւնն. Ո՛չ ապաքէն Կամպէդդան էր որ Ֆրանսայի մեծագոյն թշնամին կը համարէր պապականութիւնը, կաթոլիկութիւնը, կղերականութիւնն. Եւ սակայն, ո՞չ ապաքէն Կամպէդդա և անոր արբանեակը Բօլ Պէռ բարձրաձայն հռչակած են միշտ թէ կաթոլիկութիւնը, թէեւ ներքնապէս վնասաբեր է Ֆրանսայի, բայց օտար երկրաց մէջ օգտակար է Ֆրանսայի, իբրեւ միջոց ֆրանսական ազդեցութեան, իբրեւ յենարան Ֆրանսայի քաղաքական գործողութեան, իբրեւ գործիք Ֆրանսայի երկրային, առեւտրական և արուեստական ծաւալման.

Ո՛չ ապաքէն Կամպէդդա եւ Ժիւլ Ֆէրրի Ֆրանսայէն վռնտեցին Ճիզուիդներն՝ անոնց վնասաբեր գործունէութեան չհանդուրժելով. Եւ սակայն, ո՛չ ապաքէն Կամպէդդա և Ժիւլ Ֆէրրի իրենց սկզբունք դրին օտար երկրաց մէջ պաշտպանել Ճիզուիդներն, այն տեսութեամբ թէ, Ֆրանսայի քաղաքական շահերն յառաջ տանելով, օտար երկրաց մէջ Ճիզուիդք օգտակար կրնան լինել Ֆրանսայի.

Ի՞նչ է պատճառն որ Աւստրիոյ, Իտալիոյ և Ֆրանսայի կաթոլիկ Տէրութիւնք իրենց երկիրներէն կը վռնտեն Ճիզուիդներն, եւ սակայն օտար երկրաց մէջ կը պաշտպանեն Ճիզուիդներն. Ո՛չ ապաքէն, որովհետեւ կը տեսնեն թէ օտար երկրաց մէջ, —մանաւանդ Թուրքիոյ պէս հարուստ, գեղեցիկ և ապագայ ունեցող երկրի մը մէջ,—Ճիզուիդք Եւրոպիոյ կաթոլիկ Տէրութեանց քաղաքական շահերը կը յառաջացնեն ամենայն ճարտարութեամբ.

Կարելի՞ է ուրեմն երկբայել թէ արեւելեան երկրաց մէջ ընդհանրապէս, և մա՛նաւանդ Թուրքիոյ մէջ, Ճիզուիդաց գործը պարզապէս Քրիստոնէութեան մէկ ձեւոյն տեղ ուրիշ ձեւ մը դնել չէ՛, այլ արեւելեան ազգութեան մը տեղ արեւմտեան ազգութիւն մը դնել է, եւ օսմանեան ազդեցութեան տեղ՝ լատինական ազդեցութիւն.

Քսու բերաններ կ'ըսեն թէ Ճիզուիդք ծառայութիւն մը կը մատուցանեն Օսմ. Տէրութեան՝ Օսմ. հպատակ ազգութեանց մէջ մուծանելով աշխարհաքաղաքացիութիւն.

Ի՛նչ մեծ գովեստ Ճիզուիդներուն համար.

Միթէ օսմանեան հպատակներ աշխարհաքաղաքացի (քօզմօբօլիթ) դառնալով օգտակա՞ր կը լինին Օսմ. Տէրութեան. Աշխարհաքաղաքացիութիւն կ'ենթադրէ ուրացում թէ՛ ազգութեան և թէ հայրենեաց. Արդ, ո՞ր Տէրութիւն կը փափաքի աշխարհաքաղաքացի հպատակներ ունենալ, որպէս զի Օսմ. Տէրութիւնը կարենայ փափաքել. Աշխարհաքաղաքացի հպատակներ անտարբեր պիտի լինին Օսմ. Տէրութեան ամբողջութեան և բարօրութեան. Իրենց անձնական շահը միայն պիտի նային, և երբ այդ անձնական շահն ապահովեալ տեսնեն ընդ հովանաւորութեամբ լատին Տէրութեանց՝ պիտի դիմեն այդ Տէրութեանց պաշտպանութեան.

Օսմ. Տէրութեան համար միթէ չա՞հ մ'է ունենալ այսպիսի հպատակներ.

Ո՛չ ապաքէն մեր յուսամիտ Վեհապետին հայրենասէր Նախարարաց փորձեալ իմաստութեան դէմ նախատինք մ'է վայրկեան մը ենթադրել անգամ թէ նոքա փափաքող լինին աշխարհաքաղաքացիութեան աճման և զօրացման ի Թուրքիա.

Աշխարհաքաղաքացիութիւն կամ լատինականութիւն, — զի երկուքը մի և նոյն բանը կը նշանակեն մեր երկրի համար,— քաղաքական զէնք մ'է զոր հեռանկատ Տէրութիւնք ոմանք կը պատրաստեն մեր մէջ ի ձեռն Ճիզուիդաց, [illegible] եացքներն ի գործ դնելու համար.

Ռուսիա Օրթոտոքսութեան ոյժ կուտայ. Ֆրանսա՝ Կաթոլիկութեան. Եւ Ռուսիա ու Ֆրանսա հետզհետէ իրարու կը մօտենան, կը համաձայնին և օր մը անշուշտ պիտի դաշնակցին.

Արդ, քիչ շատ քաղաքական հեռատեսութիւն մը ցոյց չպիտի՞ տայ մեզ թէ ի՛նչ մեծ վտանգ մեր երկրին կ'սպառնան ռուսական Օրթոտոքսութիւնն արեւելքէն և ֆրանսական կաթոլիկութիւնը կամ Լատինականութիւնն արեւմուտքէն.

Եւ ո՞ր Եկեղեցւոյն դէմ առաւելապէս կը յարձակին այս օտար փրօփականտայք. — Հայ Եկեղեցւոյն դէմ, Օսմ. Տէրութեան հայ հպատակաց ստուար մեծամասնութեան պատկանած եկեղեցւոյն դէմ, որ, պաշտպանելով ինքզինք, ուղղապէս կը պաշտպանէ օսմանեան հաւատարմութիւնն, օսմանեան հպատակութիւնն, օսմանեան շահերն ընդդէմ օտար շահուց.

Լատինականութիւնը կը գործէ ո՛չ միայն ի Փոքր Ասիա այլ և յեւրոպական Թուրքիա, և մի և նոյն տեսութեամբք.

Աւստրիա և Իտալիա, որք արեւելեան Եւրոպիոյ կողմը դիտումներ ունին, մի եւ նոյն չարժամիտներով Պալքանեան թերակղզւոյն մէջ ոյժ կուտան կաթոլիկութեան.

Արդ, կը հարցնենք թէ Օսմ. Տէրութեան քաղաքական ընդհանուր շահուց համաձա՞յն է այս լատին փրօփականտան ի ձեռն Ճիզուիդութեան.

Ո՛ր Օսմանեան հայրենասէր կը համարձակի հաստատական պատասխան տալ այս հարցման.

Մեք ո՛չ միայն Թուրքիոյ քաղաքական ընդհանուր շահուց բացարձակապէս վնասաբեր կը համարինք Ճիզուիդաց գործունէութիւնն, այլ և երկրին ներքին բարեկարգութեան վնասաբեր կը նկատենք զայն, երբ կը տեսնենք թէ Ճիզուիդական փրօփականտան միջոց մ'եղած է խանգարելու Տէրութեան հաւատարիմ հպատակաց խղճի և մտաց անդորրութիւնն, և մշտական նիւթ մ'եղած է գաւառային խռովութեանց, երկպառակութեանց, գայթակղութեանց, և Պատրիարքարանաց ու Բ. Դրան միջեւ անվերջ բանակցութեանց.

Օսմ. Տէրութեան մեծ պարծանքն է իւր կրօնային ներողամտութիւն, որով թոյլտուութիւն կ'ընէ կրօնային ամեն պաշտամանց ազատ կիրառութեան ի Թուրքիա. Նոյն ներողամտութեան շնորհիւ, Ճիզուիդք կրնան իրենց կրօնքն ազատապէս պաշտել ի Թուրքիա. Բայց ա՛յլ է կրօնային ներողամտութիւն, ա՛յլ է լատինական փրօփականտայի մը քաջալերութիւն. Ա՛յլ է թոյլատրել կրօնի մը կիրառութիւնն, ա՛յլ է դիւրութեան միջոցներ տալ կրօնական - քաղաքական գործակալներու՝ մարդ որսալու Տէրութեան հպատակներէն. Կրօնային ներողամտութեան ո՛չ մէկ Օսմ. հայրենասէր կրնայ հակառակիլ. Բայց աներկբայ ենք թէ ամեն Օսմ. հայրենասէր պիտի փափաքի որ չափ մը դրուի Ճիզուիդաց մեր պարզամիտ ժողովուրդը խաբելու համար ի գործ դրած ապօրէն հնարքներուն, եւ վերջ մը դրուի քաղաքական փրօփականտայի մը, որ՝ կրօնական պատրուակի տակ սքօղեալ՝ կը վտանգէ Օսմ. Տէրութեան թէ՛ ընդհանուր քաղաքական շահերն և թէ ներքին բարեկարգութեան շահերը.

# ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

**ԳԵՐՄԱՆԻԱ.** Մի կողմէ Գերմանիոյ, միւս կողմէ Անգլիոյ և Միացեալ Նահանգաց միջեւ կարեւոր վէճ մը ծագեցաւ Մելանեզիոյ (Խաղաղական Ովկէան) Սամօա Արշիպեղագոսին տիրութեան մասին. Տարի մը առաջ Գերմանիա, պնդելով թէ այս կղզեաց բովանդակ վաճառականութիւնք գերման հպատակաց կը պատկանի, Արշիպեղագոսին երկու թագաւորներէն մին՝ զԹամաթէզէ որ Գերմաններուն նպաստաւոր էր, ուզեց պաշտպանել նորա հակառակորդին դէմ, և Արշիպեղագոսը գրաւելու ցոյց մ'ըրաւ. Բայց Գերմանիա համաձայնութիւն մը կնքած էր Անգլիոյ և Միաց. Նահանգաց հետ, որով այս երեք Տէրութիւնք փոխադարձաբար կ'երաշխաւորէին Սամօայի անկախութիւնը. Գերմանիա հարկադրեցաւ տեղի տալ իւր դաշնակցաց դիտողութեանց առջեւ, և բարձաւ իւր դրօշը Սամօայէն. Այսօր, Գերմանիա կը նորոգէ նոյն ձեռնարկը. Գերման նաւախումբը, Սամօայի միւս Մալիէթօա թագաւորէն տուգանք պահանջեց վասն այն վնասուց զորս նոյն թագաւորին հպատակները պատճառեր են գերմանական ագարակներու, և թագաւորին մերժողական պատասխանին վրայ, 500 զօրք հանեց յԱպիա, և զԹամաթէզէ հռչակեց թագաւոր բովանդակ Արշիպեղագոսին. Մալիէթօա ուզեց պատերազմիլ. Բայց Անգլիոյ և Միաց. Նահանգաց հիւպատոսները խորհուրդ տուին նմա իրենց խնամոց թողուլ զիւր դատ, և բողոքեցին Գերմանիոյ գործողութեան դէմ. Խնդիրն հոն կը մնայ. Բայց տարակոյս չկայ թէ գործին մեծ կարեւորութիւն պիտի տայ ամերիկեան դաշլիճն, որ գաղթային խնդրոց մէջ իւր իրաւանց և պարտուց նախանձախնդիր է յոյժ. Նմանապէս շատ հոգածութիւն կը ցուցնէ Լոնտոնի դաշլիճն, որ Աւստրալիոյ գաղթականութեանց առջեւ պարտականութիւն ստանձնած է ամեն օտար տիրապետութեան դէմ պաշտպանելու Խաղաղականի կղզիներն. Այս հոգածութեամբ Անգլիա մօտերս գրաւեց Թօնկայի կղզեխումբն, և կը ծանուցուի թէ ի մօտոյ վերջնապէս պիտի միացնէ Ֆիճի կղզեխումբը Վիքդորիայի աւստրալեան գաղթականութեան հետ.

**ԲՈԼՈՆԻԱ.** Բօզնանիոյ կամ Բոզենի պրուսիական նահանգին մէջ գերման գաղթականութիւն հաստատելու համար կազմեալ Յանձնախումբը Լեհերէ գնած է ցարդ 30,000 հարիւրակալ հող [illegible] 20 միլիոն ֆրանքի արժողութեամբ. Այս հողերը կը բաշխուին գերման գաղթականներու, Ռայխստակին քուէարկած օրէնքին համեմատ. Պիզմարք Իշխանին կառավարութիւնն արտօնեալ էր պրուսիական Լեհաստանի այս գործնական եղանակաւ գերմանացուցման գործին յատկացնել 125 միլիոն ֆր. որով տակաւին տրամադրելի ունի 105 միլիոն ֆրանք.

Միւս կողմէ, լեհական ընկերութիւնն որ կազմուած էր լեհական հողերը պաշտպանելու համար այս գերմանական ստացութեան դէմ, պարապ չկենար. Նեղը մնացած լեհ կալուածատերց կամ փոխատուութեամբ կ'օգնէ, և կամ ինք կը գնէ անոնց ի վաճառ հանած հողերը, վերստին Լեհերու վաճառելու համար. Այս ընկերութիւն համոզուած գոյացուցեր է թէ լեհ կալուածատերց մեծամեծ ագարակներուն ստորաբաժանումը լաւագոյն միջոցն է հողերը Լեհաց ձեռքը պահելու համար. ուստի կը հրաւիրէ իւր ազգակիցներն աջակցիլ այս կենսական ձեռնարկի.

**ՍՊԱՆԻԱ.** Երկու պէլճ ճարտարագէտներ Սպանիոյ մէջ նախապատմական յոյժ հետաքրքրաշարժ գիւտեր ըրին այս օրերս, Քարթաժէնայէն մինչեւ յԱլմերիա ծովեզրին երկայնութեամբ. Երեւան հանեցին 30 կայարաններ, ուր կը կարծուի թէ բնակած են անծանօթ ցեղեր, Արիականաց արշաւանքէն ալ առաջ. 12,000է աւելի սարերք գտնուեցան. Հնագոյն կայարաններուն մէջ մետաղ չկայ. բայց միւսներուն մէջ յաջորդաբար կ'երեւին քարի, երկաթի, արոյրի և ի վերջոյ ոսկւոյ դարերը. Զէնքեր, գոհարեղէններ, գործիքներ, անօթներ, ձեռքով շինուած ամաններ գտնուած են այս դամբարաններու մէջ, որոց հնութեան աստիճաններն որոշել կ'աշխատին այժմ.

**ԿԵՆԴՐ. ԱՍԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ.** Պ. Պօնվալօ հանրածանօթ ֆրանսացի ուղեւորը նամակներ ուղղելով առ Տէմբ., կը պատմէ իւր և երկուց ֆրանսացի ընկերաց կենդ. Ասիոյ մէջ Բամիրի լեռնադաշտէն անցնելու արկածներն. Առաջին նամակով, Մազդուքէ գրուած յունիս 10ին, կը պատմէ թէ իւր երկու ուղեկցաց հետ մեկնեցաւ Աք-Պաղկայէ, ի հիւսիսակողմն Բամիրի, մարտ 19ին, լուսնի լուսով, սառած ձիւնին վրայ ճամբորդելու առաւելութիւնն ունենալու համար. Շատ դժուարութեամբ անցան Թալտիքի կիրճէն, երբեմն թաղուելով եօթն ոտք խորութեամբ ձեան մէջ. Սաստիկ ցրտօք դով մը 5 օր ճամբորդեցին ձեան վրայ, յորմէ արեգական ճառագայթներուն ցոլացումն յոյժ կը շլացնէր իրենց աչքերն. Ուղեւորք երբ հասան ի Բիզիլ-Արտ, յոգնած ուժասպառ էին. Իրենց շրթունքները, քիթերն և աչքերը խղճալի վիճակի մէջ էին. Օր մը հանգչելէ յետոյ, շարունակեցին ուղեւորութիւնն, և Գարա-Գուլէ լճին առջեւ տեսան որ իրենց 50 ձիերէն 20ը միայն կենդանի մնացած էին. Բանկ-Գուլէ լճէն հանելով, 3 ձի եւս կորուսին, որք Դըզըլ ճեղք կիրճին մէջ [illegible]. Ուղեւորք կը նեղուէին օդին անօսրութենէն, որ զիրենք անկարող կ'ընէր ամենադոյզն դնդերային աշխատութեան. Ապրիլ 1ի գիշերը չինական պահականոց մը հասան. Դժբախտութիւն մ'եղաւ այս. Քաղաքավարութեամբ ճամբան հարցուցին, բայց ետ դառնալու հրամանն առին. Չինացի սպան յայտարարեց թէ թոյլ չպիտի տայ շարունակել իրենց ճամբան, մինչեւ որ հրաման չառնու Բէքինէ, ապա թէ ոչ ինքն իսկ մահուամբ կը պատժուի. Ուղեւորութեան յաջողութիւնն ի վտանգի էր. ուստի ուղեւորք որոշեցին մտիկ չընել չինացի պաշտօնէից. Գլխաւոր չինացի սպան կը հրաւիրեն թէյ խմել իրենց հետ. Սպան կուգայ երկու զինուորներով. Պ. Պօնվալօ կը գրէ. «Առանց հետեւելու հիւրասիրութեան օրինաց, գաւազանով մը չարաչար ծեծեցի զնա, և սպառնացայ կտրել իւր ականջներն եթէ անմիջապէս չտայ մեզ պէտք եղածին չափ ուղտեր.» Չինացի սպան կուտայ պէտք եղած հրամաններն, և Պ. Պօնվալօ կը հսկէ նորա վրայ մինչեւ այդ անհրաժեշտ կենդանեաց գալուստն. Ուղեւորք

---

—)( 48 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

# ԺԻՒԼ ՄԱՐԻ

# ԹԵՌԷԶ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՂԴԻՆ ՊՈՂՈՏԱՅՆ

—Եւ եթէ տարօրինակ, անակնկալելի պարագայ մը մեր գաղտնիքը յանձնա՛ծ է այդ երկու մարդոց... Եւ եթէ, իրենց լածին վրայ վստահ, կ'ուզեն իրենց ճանկերուն մէջ առնուլ զմեզ.

—Զէ՞ք յիշեր թէ կոմսուհւոյն երկու զաւակաց ուսին վրայ մէկ մէկ նշան դրոշմուած է. Ժաքի աջ թեւին եւ Ժոռժի ձախ թեւին վրայ կը գտնուին իրենց անուան սկզբնատառերը.

Կիւյ արդարեւ կը յիշէր այս կէտը... Ապահով միջոց մ'էր այս գիտնալու թէ Սամսոն չէր ստեր. Սակայն ի՞նչպէս տեսնել այդ նշանը...

—Դուազէօլ, ըսաւ կոմսը, մոռցիր այս խօսակցութիւնս... մոռցի՛ր բոլոր ըսածներս...

—Ուրեմն չը՞ պիտի ըսէք թէ ո՛ւր տեսած էք այդ մանուկները...

—Վերջէն կ'ըսեմ, երբ ապահով լինիմ.

—Հապա տիկին կոմսուհւո՞յն... մօ՞րը...

—Անո՞ր... երբե՛ք, ըսաւ Կիւյ կոպտութեամբ. Ի՞նչպէս կրնամ ըսել, առանց ոճիրս խոստովանելու.

Դուազէօլ գլուխը թօթուեց եւ պատասխան չտուաւ.

Դաճգուա տագնապալի վիճակի մը մէջ էր եւ Դուազէօլ կը հասկնար զայդ...

Կը հասկնար նաեւ թէ կոմսը բնաւ չպիտի խօսէր մինչեւ որ չբռնադատուէր դէպքերէն...

Եւ սոսկալի ցնցում մը պէտք էր որպէս զի բերանը բանար.

Մինչդեռ Դաճգուա կոմսն այսպէս կը խօսակցէր իւր մեղսակցին հետ, Ժանն կոմսուհին գնացած էր Թեռէզի քով՝ նորա սրտին վիճակն անձամբ հասկնալու համար.

Կոմսուհին հաղորդեց նմա Սամսոնի խնդիրը.

Թեռէզ տարտամ կերպիւ կը ժպտէր մտիկ ըրած ատեն, ջանալով սքօղել իւր զգացումներն, այլ սիրտն ուռած, որովհետեւ Ժան-Մառգի վրայ կը խորհէր.

—Ըսել է չես սիրեր Գլէմանը, կը մրմնջէր Ժանն.

Մանկամարդ աղջիկը թօթուեց գլուխը. Դէմքին վրայ սոսկում նկարուած էր յանկարծ. Սակայն Ժանն կոմսուհին կը պաշտէր իւր Գլէման զաւակն, որպէս երբեմն զգոյշ եւ զգօն. բան մը չնշմարեց.

—Եւ Սամսո՞նը կը սիրես.

—Կը սիրեմ զնա, ըսաւ խղճուկ ձայնով մը, Ժան-Մառգի վրայ խորհելով միշտ.

Կոմսուհին հառաչեց. ապա պահ մը լռութենէ յետոյ.

—Լաւ, ըսաւ... Կոմսն եւ ես որոշած ենք չհակառակիլ ամուսնութեանդ... Միայն որ դուն ազատ ես եւ մենք խրատ միայն կրնանք տալ քեզ... Սակայն քիչ մը ժամանակ պիտի խնդրենք քեզմէ, որովհետեւ ապագայդ եւ երջանկութիւնդ ապահովելու համար պէտք ունինք գիտնալու թէ այդ երիտասարդն արժանի՞ է քեզ.

Համբուրեց Թեռէզը, դուրս ելաւ սենեկէն, եւ հանդիպելով Գլէմանի, ամեն տեսակ զգուշութեամբք իմացուց նմա թէ ի՛նչ անցած դարձած էր.

Գլէման ունկն դրաւ նմա առանց պատասխանելու.

Երկար ժամանակէ ի վեր կ'սպասէր այս խոստովանութեան, եւ ըստ որում իւր մայրը պատ ի պատ դարձուածքներ կը փնտռէր՝ մեղմութեամբ ծանուցանելու համար նմա այս լուրն, ըսաւ.

—Կը հասկնամ, մայր իմ, կ'ուզէք իմացնել ինծ որ Թեռէզ կնութեան խնդրուած է.

—Այո, ըսաւ կոմսուհին զարմացմամբ. Գիտէի՞ր.

—Գէթ կը կասկածէի. Երկար ատենէ ի վեր որոշումս տուած եմ, յորմէ հետէ տեսայ թէ կը սիրէր Ժան-Մառգը, Պոմպէի գործարանին տէրը.

—Ժան-Մա՛ռգ, ըսաւ կոմսուհին զարմացմամբ.

—Նորա վրայ չէի՞ք խօսեր.

—Ո՛չ, Սամսոնի վրայ...

—Սամսո՞ն... Զնա՞ կը սիրէ... այդպէ՞ս ըսաւ.

Գլէման լռեց.

Այս խոստովանութեան մէկ մասն անտարակոյս կը զարմացնէր զնա.

Կը խորհէր.

—Կը կարծէի թէ Ժան-Մառգը կը սիրէ եւ ոչ թէ միւսը... Անշուշտ կ'խաբուիմ... Միայն որ, երկուքն որն ալ լինի, նոյն իսկ եթէ հարկ լինի ձեռքովս սպաննել, Թեռէզ չպիտի ամուսնանայ նմա հետ...

Եւ անագորոյն ժպիտ մը պայծառեց նորա շրթունքը.

—Պէտք չպիտի ունենամ սպաննելու զնա. Ատկէ առաջ պիտի անյայտանայ.

Միւս կողմէ, երբ Սամսոն գործարան դարձաւ, վազեց անմիջապէս գտաւ Ժան-Մառգն եւ նորա թեւոց մէջ ինկաւ.

—Բարեկամս, իմ բարի Ժան-Մառգս, պիտի խենդենամ...

—Ի՞նչ ունիս.

—Կը կարծէի թէ պիտի զլանան ինծ Թեռէզը, պիտի վռնտեն զիս, վրաս պիտի խնդան... Է՛հ, ո՛չ, բարեկամս, ինծ կուտան Թեռէզը, Թեռէզ իմս է, կը հասկնա՞ս...

—Կը հասկնամ, ըսաւ Ժան-Մառգ բեկեալ ձայնով մը...

Եւ բոլոր ուժովը սեղմելով Սամսոնի երկու ձեռները.

—Բարեբաստ պիտի լինիմ երջանկութեանդ վրայ, հաւատա ինծ, շա՛տ բարեբաստ.

Ը.

Երկու երիտասարդներն հաշիւ ըրած էին թէ սնանկութենէ պիտի ճողոպրէին՝ վաճառելով գործարանին յարակից հողերը.

Սխալած չէին, լաւ հաշուեր էին.

Այդ հողերուն գինը, զոր յաջորդ օրը վճարեց նոցա Կիւյ տը Դաճգուա, գոցեց բացն եւ թոյլ տուաւ իրենց գոհացնել պահանջատէրերը.

Կոմսն անձամբ բերաւ ստակը.

Կ'ուզէր վերստին տեսնել զՍամսոն եւ Ժան-Մառգ, անդիմադրելի բաղձանք մը զգալով, տակաւին կասկածելով թէ կոմսուհւոյն զաւակներն էին նոքա, եւ միշտ սոսկալով այն տարօրինակ դիպուածէն որ այսպէս միացուցած էր երկու եղբայրներն եւ իւր ճամբուն վրայ նետած.

Երկրորդ անգամ մ'ալ երկուքին պատմել տուաւ իրենց մանկական յիշատակները, ջանալով գտնել անդ հաւաստիութիւն մը, յուսալով որ պիտի վարանէին, պիտի փնտռէին, պիտի շփոթէին.

Այլ նոքա, միեւնոյն անկեղծութեամբ, եւ առանց կասկածելու թէ ի՛նչ մանրակրկիտ ուշադրութեամբ ականջ կը դրուէր իրենց, պատմեցին իրենց առաջին յիշատակներն. իրենց փախստեան պատմութիւնը մնացած էր իրենց մտաց մէջ, ամեն մանրամասնութեամբք եւ օրն օրին.

Իրենց կենաց այդ մասին վրայ մանաւանդ կը սիրէին խօսիլ.

Իրենց կեանքը կերպիւ իւիք կանգ չէ՞ր առներ այն օրն յորում Պոմպէի հանդիպելով, իրենց չարչարանքները վերջ գտած էին.

Կիւյ մտիկ կ'ընէր, եւ դիտելով այդ երկու անկեղծ դէմքերն, այդ պարկեշտ եւ քաղցր նայուածքները, կը խորհէր թէ անհնար էր որ խաբէին զինքն եւ թէ իրենց ըսածն ստուգիւ ճշմարտութիւն էր.

—Եւ յաճախ խորհա՞ծ էք, մրմնջեց, ձեր մօր, ձեր հօր վրայ. Երբեք չէ՞ք հարցուցած ձեզի թէ ո՛յք էին եւ թէ ի՛նչպէս լքած էին զձեզ... Եւ ձեր երազոց մէջ, յաճախ յոյս ունեցած չէ՞ք վերստին տեսնելու, վերստին գտնելու զիրենք.

—Ինչո՞ւ, ըսին մտատանջութեամբ համակուելով յանկարծ, ո՛րչափ անգամ կը խօսինք մեր ծնողաց վրայ... սակայն ի վաղուց հետէ յուսահատած ենք... Հրաշք մը պէտք է եւ այդ հրաշքը տեղի չպիտի ունենայ. Մինչեւ իսկ երբեմն երբեմն կը պատահի որ չենք ըղձար գտնել մեր ծնողները.

—Ինչո՞ւ համար.

—Որովհետեւ ամեն բանէ առաջ կը վախնանք իրարմէ բաժնուելէ, եւ մեր ծնողները գտնելով, թերեւս հարկադրուինք բաժնուիլ իրարմէ... Եղբօր պէս կը սիրենք զիրար եւ մեզ համար ամենէն մեծ դժբաղդութիւնն է այլ եւս չտեսնե՛լ զիրար...

Եւ երկու բարեկամները բռնեցին իրարու ձեռքէ եւ ժպտելով միմեանց նայեցան.

Խաբեբայնե՞ր, ադո՞նք.

Միթէ մարդ կ'ունենա՞յ այդ ժպիտն եւ այդ նայուածքն երբ խարդախութիւնը բոյն դրած է իւր հոգւոյն մէջ.

(Շարունակելի)

գիտէին թէ խումբ մը Չինացիք ղրկուած էին օգնական զօրք բերելու, ուստի Ֆրանսացիք կ'աճապարէին մեկնիլ, իրենց դէմն ելնող չինացին սպաննելու հաստատ մտադրութեամբ։ Ուր որ ուղտեր կը գտնէին, կը գրաւէին, և այսպէս կը հասնէին Աք-Դաշ, 50 բնակչօք տեղ մը, Թաղարուզայէ ի Վախան գացող կարաւաններու ճամբուն վրայ։ Կ'սպասէին յԱք-Դաշ գտնել խումբ մը չինացիներ զիրենք կասեցնելու համար. բայց ձիւնը փակած էր Թաղարուզայի կիրճն և այսպէս զիրենք պաշտպանած։ Անօթի չմեռնելու համար ստիպուեցան ոչխար մ'առնուլ Խրկըզ բնակիչներէն եւ դրամ առաջարկեցին։ Բայց այդ մարդիկ հրապարակաւ չուզեցին առնուլ դրամը. զի կը վախնային Չինացիներէն, որք խստիւ պատժած էին Ռուսերուն պաշար և բեռնաբարձ կենդանիներ վաճառող Խրկըզները։ Թէև ուղեւորք այնչափ բարձր տեղւոյ մը վրայ չէին այժմ, բայց տակաւին ձիւնով պաշարուած կը գտնուէին։ Աֆղան երկիրն հասնելով, ուղտապաններ վարձեցին իրենց գոյքերը Գունճուր տանելու համար Դաշ Քեօբրիւի հովտին ճամբով։ Բայց չորրորդ գիշերն ուղտապանք փախան։ Կիրճն անանցանելի գտան, և հարկադրեցան ետ դառնալ, թողլով իրենց գոյքերն և կորսնցնելով 5 ձի եւս։ Կարաւանի ճամբուն վրայ կանգնեցին իրենց վրաններն, և սպասեցին ճամբորդներու, ձի կամ ուղտ ճարելով իրենց գոյքերն ետ բերելու համար։ Կարաւան մ'եկաւ, և 300 ֆր.ի փոխարէն իրենց գոյքերը փոխադրեց մօտագոյն աֆղան գիւղը։ Ֆրանսացիք հասան հոն. բայց աֆղան բնակչաց կողմէ չորս օր արգիլուելով, հարկադրեցան մեկնիլ առանց առաջնորդի, և գէշ աղէկ հասան Չիթրալ։ Ի Մասթուճ ձիերն ուժասպառ ինկան և իրենք ալ հարկադրեցան կանգ առնուլ։ Աֆղանք մահ կ'սպառնային։ Շատ մը խօսքերէ յետոյ, Պ. Քաբիւս եւ Պ. Բէբէն գացին Չիթրալ, Աֆղանաց հրամատարին հետ տեսնուելու։ Հոն եւս ձերբակալութիւն եւ սպառնալիք կ'ըսպասէին իրենց։ Բայց նոյն միջոցին իրենց նամակներն հասած էին անգլօ-հնդիկ կառավարութեան, որու միջնորդութեամբ արձակեցան։ Երբ յուլիսի 20ին Ճիլկիթ հասան, ո՛չ զգեստ ո՛չ ալ ո՛ և է գոյք ունէին, բայց դրամ կը գտնուէր իրենց քով, նպաստի գումար մը ղրկուած լինելով անգլօ-հնդիկ կառավարութեան կողմէ։ Պ. Պօնվալօ Ճիլկիթէ յուլիս 23ին գրած վերջին նամակաւ կ'ըսէ թէ մինչեւ որ Քաշմիրի սահմանագլուխն հասնին, [illegible] եւ րեֆօլվըրով սպառնալիք ընելով միայն կրնային բեռնակիր եւ ձի գտնել։ Օգոստոս 3ին անգլիական հողն հասան, ուր վերջ գտան իրենց տառապանքներ։

ՄԻ ՔԱՌՈՐԴ ՈՍԿԻ

Կը վճարեմ [illegible] կիրակնօրեայ մանկավարժական դասախօսութիւնքս բառական ճշդութեամբ գրի առնուլ յանձն առնողին։ Ցանկացողք դիմելու են. Բերա, Եազըճը փողոց, 26։

Դ. ՔԱՂԱՆԹԱՐԵԱՆՑ

1166 2—4

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շաբաթ օր Ելմտական պաշտօնատունն երթալով տեսակցեցաւ Ելմտական Նախարար Վսեմ. Զիւհտի փաշայի հետ։

Ն. Ամենապատուութիւնն յետոյ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին երթալով աչքէ անցուց կատարուած նորոգութիւնները։

Մշոյ վիճակին և Ս. Կարապետի վանուց միացման ի՛նչ հիման վրայ կատարուած լինելը կոնդակաւ մը հաղորդուեցաւ Սրուանձտեանց Գեր. Գարեգին եպիսկոպոսին։

Կեսարիոյ Առաջնորդ Արժ. Տրդատ վարդապետի պաշտօնը վաւերացնող կայս. Պէրաթը շաբաթ օրն Ազգ. Պատրիարքարանին յանձնուեցաւ։

Իզմիրէն կը գրեն մեզ սեպտ. 3 թուականաւ.

«Տաճպաղեան վարդապետ դեռ կը մնայ ի Մանիսա. ամեն միջոցներ ի գործ կը դրուին զայն թող չտալու որ մայրաքաղաք գայ՝ հակառակ ծանուցեալ որոշմանց և հրամանաց։»

Խառն Ժողովը այսօր ի նիստ կը գումարի ի Պատրիարքարան, ինչ ինչ կարեւոր խնդրոց կարգադրութեան համար։

Հինգշաբթի աւուր Լոյտի շոգենաւով Իզմիր ուղեւորեցաւ Վսեմ. Մաքսուտ Սեպուհ էֆէնտի որ երկու ամսոյ չափ անդ պիտի մնայ անձնական գործոց պատճառաւ։

### ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս պարտ անձին կը համարի ներկայիս գոհունակութեամբ յայտարարել թէ՝ Վսեմ. Սալէա Զօհրապ իւր ծանուցեալ բարեպաշտութեամբն և ազգասիրութեամբն բարեհաճեցաւ հաշիւներովի համար 2447 և նուէր 540, ընդ ամենը 2987 դահեկանի գումար մը նուիրել հաստատութեանս։

Նորին Վսեմութեան սոյն մարդասիրական գործն արժանալէս Հոգաբարձութեանս վրայ պարտաւորութիւն կը դնէ հրապարակաւ եւս յայտնել մեր ամենախորին շնորհակալիք, հաւատի լինելով որ նորա այս օրինակելի գործն հետեւողներ կ'ունենայ ի մխիթարութիւն հարիւրաւոր պատսպարելոց հաստատութեանս։

Հոգաբարձութիւն Ազգ. Հիւանդանոցի

Ատենապետ — Ատենադպիր

Յ. ՖԵՆԷՐՃԵԱՆ — ՄԻՔ. ՑԱԿՈԲԵԱՆ

Հաշուակալութեան և առեւտրական այլ և այլ գիտութեանց մէջ վկայեալ երիտասարդ մը պատրաստ է ազգային վարժարանաց մէջ և մասնաւորաց դասախօսել, այցելութեան երթալ, վաճառականաց տետրակներ բռնել, գոհացուցիչ պայմաններով։ Դիմել Արեւելքի խմբագրատուն։

1116 3—5

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ՊԱՇՏՕՆԱՆՇԱՆՔ, ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ

Իւլայի երկրորդ աստիճան տրուեցաւ մաքսային վերատեսչութեան օգնականի ընկեր Խայրի պէյի։

Երրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Զ. զօրաբանակի պահեստի զօրաց 51րդ կիսաբաժնին հրամանատար Միրլիվա Իպրահիմ Հագգը փաշայի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Ֆրանսացի Պ.Պ. Լօժէն Վէնսանի և Վիլդէրի։

Օթմանեան Դատըրը անուանեցաւ Արապ Զատէ Րիզա պէյ, որոյ պաշտօնավարութիւնը կ'սկսի 1305 տարւոյ Մուհարրէմի առաջին օրէն։

### ԻՍԼԱՄԱՑ ՏԱՐԵԳԼՈՒԽԸ

Շէյխ-իւլ-Իսլամի Դրան կողմէ կարգեալ յատուկ պաշտօնեայք թէեւ նախընթաց գիշեր սպասեցին լուսնոյ մահիկը տեսնելու, սակայն անկարելի եղաւ. հետեւաբար Զիլհիճճէ ամսոյ երեսուն օրն երէկ ամբողջացած [illegible] ուելով այսօր կ'սկսի Իսլամաց տարեգլուխն, 1 Մուհարրէմ 1305։

Այս առթիւ բոլոր նախարարք և զինուորական ու քաղաքային բարձրաստիճան պաշտօնատարք կայս. պալատ կ'երթան իրենց շնորհաւորութիւնները մատուցանելու յոտս կայս. գահոյից։

Տարեգլխոյ առթիւ իսլամք սովորութիւն ունին միմեանց դրամական նուէրներ ընելու, որք Մուհարրէմիյէ կը կոչուին. ըստ այս սովորութեան, նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք Վեհ. Սուլթանին կողմէ մէկ կամ երկու հինգ ոսկինոց կ'ընդունին այսօր, շղարշի մէջ փաթթուած. կայս. պալատը շնորհաւորութեան գնացող երկրորդական պաշտօնեայք եւս կ'ընդունին կէս կամ քառորդ ոսկինոցներ, արքունական պաշտօնէի մը ձեռամբ։

### ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Թարիք կը ծանուցանէ թէ Բ. Դուռը կը խորհի պուլկարական խնդրոյն առթիւ նոր ծանուցագիր մ'ուղղել մեծ տէրութեանց։

—Նախարարական յանձնաժողովը շաբաթ գիշեր ի նիստ գումարեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսի ապարանքն ի Գուրուչէշմէ, ընդ նախագահութեամբ Ն. Բարձրութեան և զբաղեցաւ պուլկարական խնդրով։

### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆՊԱՍՏ

Վեհ. Սուլթանը տասն-հինգ հազար ոսկի նուիրած էր Ասիոյ երբեմն գաւառաց սովեալ ժողովրդեան եւ կայս. անձնական Գանձուն Նախարարութիւնն ի հաշիւ այդ գումարին վերջերս տասն երկու հազար հինգ հարիւր պարկ ալիւր գնած և Ատանա ղրկած էր։ Արդ, Ֆէրիդ Ազիզ փաշա, որ այս առթիւ յատուկ պաշտօնով Ատանա կը գտնուի հեռագիր մ'ուղղելով կայս. Նպաստամատոյց յանձնաժողովոյն՝ կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանի այս շնորհաց համար բոլոր ժողովուրդը ջերմ բարեմաղթութիւններ ըրեր է վասն կենաց և բարօրութեան Ն. Վեհափառութեան։ Հեռագիրը կը յարէ թէ այս պահուս սկսեր է անձրեւ տեղալ յԱտանա և ի շրջակայս։

### ՓԻԼԻՊԷԷՆ ԼՈՒՐԵՐ

Արեւելեան Րումէլիի իսլամ և յոյն բնակիչք որոշեր են չմասնակցիլ ի Սոֆիա գումարելի սովորական Սոպրանյէին ընտրութեանց, ըստ որում այդ ընտրութիւնները Պերլինի Դաշնագրոյն և Կազմական կանոնագրոյն համաձայն կատարել չէ հրամայուած։ Կ'ըսուի թէ Պուլկարիոյ ընդդիմադիր կուսակցութիւնն եւս չպիտի մասնակցի այդ ընտրութեանց, վասն զի կառավարութիւնը միջոցներ ձեռք առեր է եղեր քուէարկուաց ազատութիւնը սեղմելու համար։

—Փիլիպէէն կը գրեն թէ պուլկար կառավարութիւնն արգիլեր է բոլոր [illegible] դրամոց, յորս նաեւ [illegible] շրջաբերութիւնն։ Այդ դրամներ որո՛ց քով որ գտնուին, կը գրաւուին եղեր։

—Փիլիպէի վերաքննիչ ատենի նախագահն անցեալ շաբթու անստորագիր նամակ մ'ստացեր է որ անարգալից խօսքեր կ'ուղղէր իրեն եւ իւր պաշտօնակցաց, [illegible] անուանելով զանոնք, եւ մահ կսպառնար եթէ անպարտ արձակեն այն անձինքն որ Էսկի Զաղրայի մէջ Սէրպէկով անուն հաբիւրապետն սպաննած լինելու ամբաստանութեան ներքեւ կը գտնուին և եղեռնադատ ատենին կողմէ մահուան դատապարտուած են արդէն։ Այսնման վերաքննիչ ատենին մէջ կարդացուելով ոստիկանութեան յղուեր է որպէս զի գտնէ անոր հեղինակները։ Այս դէպք մեծ զայրոյթ պատճառեր է քաղաքին մէջ։

—Երէկ, 6/18 սեպտեմբեր, Փիլիպէի յեղափոխութեան երկրորդ տարեդարձն էր։ Շաբաթ աւուր թղթաբերով առնուած Սոֆիայի եւ Փիլիպէի լրագիրք, եւ ի մէջ այլոց Բօլգարիա, մասնաւորապէս կը պնդէին որ այս առթիւ փառաւոր ցոյց մը լինի արժանաւորապէս տօնելու համար երկու Պուլկարիաներու միութիւնը։

Այս առթիւ [illegible] Թղթակիցը կը գրէ Սոֆիայէն.

Այս գաղափարը նորընծեց պատուէին գործոց նախարար Տր. Ստրանսքի, որպէս զի Եւրոպա կարենայ համոզուիլ թէ ժողովուրդը որքա՛ն ջերմ զգացումներ կը տածէ միութեան գաղափարին նկատմամբ և թէ բացարձակ պէտք կայ կատարեալ խրոխտութիւնն ընդունելու։ Բնակիչք պիտի հարկադրուին իրենց բնակարանները դրօշակներով ու լապտերներով զարդարել, այս թէ ոչ տուգանաց պիտի ենթարկուին, և յայսկոյս ու յանկոյս Պալքանեան գտնուող բոլոր քաղաքաց շահավաք այս խնդրով հեռագիրներ պիտի ուղղեն Փիլիպէի և Սոֆիայի օտար հիւպատոսաց։

«Այս տնօրինութիւնք որոշուեցան նախարարաց խորհրդոյ մէջ և մերժուեցան Ֆերտինանտ իշխանին կողմէ։»

### ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Շաբաթ աւուր Լը Թիւրք հետեւեալը գրէ ասիական երկաթուղեաց շինութեան խնդրոյն վրայ որուն նկատմամբ ժամանակէ [illegible] քինկեցաւ տեղական մամլոյն մէջ։

Տասն օր անցաւ յորմէ հետէ մայրաքաղաքս հասած են Պ. Պ. Ալդ եւ Տրէօտէր (արտօնատեարց մին)։ Կ'ըսուէր թէ այս պարոնայք պաշտօն ունէին ինչ ինչ վերջին ձեւակերպութիւններ կատարել, յետ որոյ պիտի կարենային ստանալ կայս. Ֆերմանն որ անոնց կը յանձնէ Նիկոմիդիայէն Պաղտատ շինուելիք երկաթուղւոյ գծին մենաշնորհը։ Կատարելի ձեւակերպութիւնն այն էր որ 20,000 ոսկի պիտի թողուէր երբ աւանդ եւ Հայտար-Փաշայի գծը բանեցնող ընկերութիւնը 70,000 ոսկի պիտի յանձնէր երբ երաշխաւորութիւն։ Արդ, մէկ կողմէ ամեն պայմանաց վրայ համաձայնութիւն գոյացած լինելով ընդ մէջ կայս. կառավարութեան և Պ. Սիֆելտէրի և միւս կողմէ այս վերջինն, իբր ներկայացուցիչ անգլօ-ֆրանսական ընկերութեան մը (*) ստորագրած լինելով յանձնառութեանց տետրն ու պայմանագիրը, մենաշնորհի վերջնական յանձնման համար կատարելի ձեւակերպութիւնք արդեօք անսահման ժամանակի մը կը կարօտին, որպէս ցոյց կուտայ ամեն ինչ։

Այս հարցման կը պատասխանեն.

Պ. Պ. Ալդ և Տրէօտէր, Պ. Սիֆելտէրի յանձնառութեանց ո՛չ մին գործադրելէ առաջ, խնդրած են որ բարեփոխուին պայմանագրի երեք կարեւոր տրամադրութիւնք, որք կը վերաբերէին հետեւեալ կէտերուն.

1. Որոշեալ քիլոմէդրական հասոյթին, զոր բարձրացունել կ'ուզեն.
2. Գծին տարածութեան որ ենթադրուածէն մեծ է.
3. 70,000 ոսկւոյ երաշխաւորութեան ուստից խոյս տալ կ'ուզեն.

Օսմ. պաշտօնատարք մեծ զարմանք յայտնեցին երբ այս բարեփոխմունք խնդրուեցան Բ. Դրնէն. մեզ կը հաւաստեն թէ Պ. Պ. Ալդ և Տրէօտէր պատասխանած են թէ իրենք լիազօր արտօնութիւն չէին տուած Պ. Սիֆելտէրի՝ բանակցիլ բոլոր այս կէտերուն վրայ զօրս ընդունած էր։

Լը Թիւրք՝ այս պարագայներէն կը հետեւցունէ թէ կայս. կառավարութիւնը պարտի զրկել զՊ. Պ. Ալդ և Սիֆելտէր՝ ասիական երկաթուղեաց շինութեան արտօնութենէն զոր շնորհած էր կայս. իրատէ մը. թանկագին ժամանակ մը պէտք չէ կորսուի ամուլ բանակցութիւններով, երբ երկրին շահն ու ապագայն կը պահանջեն արագ լուծում մ'այս խնդրոյն և մինչ աւելի լուրջ ու ձեռնհաս դրամատերք կը գտնուին կայս. կառավարութեան տրամադրութեան ներքեւ։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Առեւտրական Լրագրէն քաղուած)

Շաբթուս մէջ գաւառներէն առնուած լրոց նայելով, հողային աշխատութիւնք առաջ կը տարուին փութով եւ սքանչելի պայմանաց մէջ։ Ներմուծելի ապրանաց վրայ մանր առեւտուրք եղան. իսկ աւելի կարեւոր գործառնութիւնք եղան առաջին ձեռքէ ապրանաց վրայ, գաւառներէն եկող բազմաթիւ ուղեւորք գնեցին մեծաքանակ բամպակեղէն, գաղթարերը, եւ այլն։ Աւելի կանոնաւոր առաքմունք եղան նաեւ ի Րումէլի։ Ալիւրի եւ ցորենի գներն առաջուան չափ տկար չեն եւ յոյս կայ որ գործերը վերսկսին։ Հունտերու գները կայուն են։

Արտածելի նիւթոց վրայ նշանակութեան արժանի փոփոխութիւն մը չկայ։ Թիֆթիկի եւ ափիոնի վրայ գործ չկրնիր, մինչդեռ գաղի խէժը եւ ճէհրին կը փնտռուին։

—Իզմիրէն կը գրեն թէ տեղւոյն թուզ վաճառողաց պահանջած բարձր գները կոտրելու համար խումբ մը գնողներ միանալով որոշեր են ո՛ր և է գնում չընել։ Օգոստոս 1 էն 21, գաւառին ներսէն 22,352 բեռ թուզ իջուցուեր է յԻզմիր, մինչ անցեալ տարի մի և նոյն ժամանակամիջոցին իջուցուած թուզի քանակութիւնն էր 13,500 բեռ։ Ասոնցմէ զատ, 40,000 կենդինար թուզ, [illegible] կոչուած տեսակէն, որք դաշտերուն վրայ թողուած էին, թրջեր են վերջին անձրեւներէն։

—Ադրիանուպոլսոյ նահանգին ամեն կողմը տասանորդի տրոց վարձակալութիւնք վերջացեր են, նախորդ տարիէն 60,400 ոսկի աւելի հասոյթ արտադրելով։ Նախորդ շրջանին մէջ եւս 106,000 ոսկի աւելի հասոյթ արտադրուած էր ի բաց առեալ վարձակալութեան ծախքն, 30,000։

—Պալըքէսէրի գաւառին արմտեաց տասանորդի տրոց վարձակալութեան գումարն եւս 112,800 ոսկւոյ հասեր է, այսինքն նախորդ տարիէն 26,400 ոսկի աւելի։

—Տէքէրդաղէ (Ադր. Պոլսոյ նահանգ) տարեկան մեծ տօնավաճառը տեղի ունեցեր է վերջերս, և կարեւոր գործեր եղեր են արմտեաց և աբջաններու վրայ։

—Պալըքէսիրէն և Պրուսայէն լուր կուտան թէ Գուրպան Պայրամէն առաջ տեղացած յորդահոս անձրեւներուն շնորհիւ, դաշտային աշխատութիւնք առաջ կը տարուին փութով. վերջին օրերս Պալըքէսիրի գաւառին ամեն կողմը դարձեալ անձրեւներ տեղացեր են։

—Միհալըճի ագարակաց միոյն եղջերաւոր անասնոց մէջ տարափոխիկ հիւանդութիւն մը ծագեր է, սակայն պէտք եղած միջոցները ձեռք առնուեր են անոր ծաւալումն արգիլելու և զայն բնաջինջ ընելու համար։

—Պրուսայի Թիմուրճը-Տաղ կոչուած սաֆինեաց անտառին (Սէօյիւտի գաւառակին մէջ) ինչպէս նաեւ Էյրիկէօզի անտառին հրդեհները շուտով մարեր են։

Միրլիվայի աստիճան տրուեցաւ ընդհ. Ապայակոյտի ճիւղին տնօրէն գնդապետ Ակեաֆ պէյի եւ նոյն ճիւղի գծագրութեան տնօրէն գնդապետ Ալի Շէրէֆ պէյի։

—Վերաքննիչ ատենի ընդհ. դադախազի օգնականներէն Համտի պէյի ամսաթոշակն երկու հազար ղրուշի բարձրացաւ ի փոխարէն իւր բարւոք ծառայութեանց։

—Վեցերորդ զօրաբանակի հրամանատար անուանեցաւ երբեմն հինգերորդ զօրաբանակի հրամանատար Միւշիր Թէվֆիք փաշա, որ այժմ օդափոխութեան համար Եւրոպա կը գտնուի։

—Պ. Ֆրէտրէն Քրիւբ և իւր ընկերք շաբաթ օրը Վառնայի շոգենաւով Գերմանիա ուղեւորեցան։ Նոյն շոգենաւին մէջ կը գտնուէր նաեւ ռումանական դեսպան Պ. Պալաչէանօ որ արձակուրդով Պուքրէշ կ'երթայ։

—Վեհ. Սուլթանն հրամայած էր որ Շէյխ-իւլ-Իսլամի պաշտօնատան շէնքը նորոգուի և այս առթիւ նախապէս տեղեկագիր մը ներկայացուի։ Արդ՝ պահանջուած տեղեկագիրը մատուցուած լինելով՝ Ն. Վեհափառութիւն հրամայած է որ նորոգութիւնն այնպէս կատարուի որ երկար ժամանակ հարկ չմնայ ուրիշ նորոգութեան մը և թէ այս պատճառաւ նոյն պաշտօնատան ընթացիկ գործոց կարգադրութիւնը չը խանգարի։

—Շէյխ-իւլ-Իսլամի Դրան կողմէ Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ նորոգութեանց առթիւ պաշտօնատունն այլուր չպիտի փոխադրուի, այլ մէկ կողմի նորոգութիւնը կատարուած պահուն անոր պաշտօնեայք ուրիշ կողմ մը պիտի փոխադրուին և յաւարտ նորոգութեան դարձեալ իրենց տեղը պիտի երթան և թէ բոլոր գործերն ըստ առաջնոյն կանոնաւորապէս պիտի կարգադրուին առանց որ և է յետաձգման։

—Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ Ֆէնէրի Պատրիարքարանէն Դատական Նախարարութեան ուղղեալ յիշատակագրի մը վրայ՝ թէ Ցէվճէի անուն աւազակապետը կ'ասպատակէ Ադրիանուպոլսոյ շրջակայքը, պէտք եղած զեկուցմունք եղած են նահանգին կուսակալութեան որ պատասխանած է թէ այդ աւազակապետը գնչու գող մ'է և երբ կառավարութենէն փոքր յարձակում մը կրէ անմիջապէս խոյս կուտայ և թէ այս պահուս ամեն կողմէ կը հալածուի ոստիկանաց միջոցաւ։ Կուսակալն յարած է թէ [illegible] այն լուր թէ այդ աւազակը Գըրգ-Քիլիսէի գիւղաքաղաքի ժողովրդեան սպառնացած է՝ բոլորովին անհիմն է։

—Այն 16 տուներ, որք անգլ. դեսպանուհւոյն ջանից շնորհիւ շինուած են յԱռնավուտգիւղ, ձրիաբար հրկիզելոց բնակութեան պիտի յատկացուին 4 տարի, յետ որոյ գիւղին յունաց եկեղեցւոյ և վարժարանին ստացուածքը պիտի լինին։

Միւշիրիւս փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովն եւս 24 տուներ կառուցանել կուտայ նոյն նպատակաւ, այս շինութեան ամբողջ ծախքը վճարելէ յետոյ, յանձնաժողովոյն քով 2000 ոսկւոյ պատրաստ գումար մը կը մնայ։

—Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է իւր մէկուկէս ամսականը շնորհել ի նպաստ Տէրութեան կարեւոր և արտասովոր ծախուց։ Պաշտօնական յայտարարութիւնը կը յարէ թէ, թէև որոշուած էր վար դնել 300 ղրուշէ վեր ամսաթոշակ ունեցող կառավարական բոլոր պաշտօնէից մէկ ամսականը, սակայն Վեհ. Սուլթանին հրամանաւ այս որոշման գործադրութիւնը զանց առնուած է և միայն Ն. Վեհափառութիւն իւր մէկուկէս ամսաթոշակը շնորհած է։

—Գօնեայի նահանգին մարդահամարի գործողութիւնն աւարտեր է։

—Սիլիվրիի տօնավաճառին առթիւ այդ կողմը գնացող ճամբորդք անցագիր պիտի առնուն։ Ի դիւրութիւն հասարակութեան, անցագրի համար մասնաճիւղեր բացուած են Ղալաթիոյ մաքսատան դէմի պահականոցին մէջ և յՍկիւտար։

—Տաղիստանցի Նիհաթ Մուսա էֆ. որ քսան տարիէ ի վեր Ֆաթիհի մզկիթին չելած էր, մեռաւ ի հասակի հարիւր ամաց։

—Իզմիրէն կը գրեն մեզ.

Տաղի հիւանդութիւնն իւր բոլոր զօրութեամբ կը ճարակի քաղաքիս գրեթէ բոլոր թաղերուն և մանաւանդ չքաւոր դասուն մէջ։ Զգուշական միջոցներ ձեռք կ'առնուին և թաղապետութիւնը փողոցներն [illegible] ֆէնիքով ջրել կուտայ եւն. բայց տարափոխիկ ախտին առաջքն առնուած չէ տակաւին։

Ոստիկանութիւնը կը ծանուցանէ թէ Էօտէմիշի, Սիվրի-Հիսարի և այլ կողմեր ձերբակալուած են բազմաթիւ չարագործներ որք այդ տեղերու ապահովութիւնը կը խռովէին և բնակչաց անդորրութիւնը կը խանգարէին։

—Գերմանական դեսպանատան առաջին թարգման Տր. Աքրէօզէր երկամսեայ արձակուրդ ստացած լինելով, վաղը կը մեկնի մայրաքաղաքէս։

—Ռուս լրագիրք կը ծանուցանեն թէ Պաղեստինու յունական ընկերութիւնը Պէյրութէն երկու արար պատանիներ ղրկեր է Քիէվի յունական կղերանոցը։

—Հելլենական խորհրդարանի անդամներէն Պ. Ռօմա մայրաքաղաքս եկած է, նմանապէս Ռուսճուքի ֆրանսական հիւպատոսն։

—Տր. Զօէրոս փաշա մինչեւ ցարդ ութն անգամ փորձած է Բաստէօռեան դարմանն շնախտի դէմ և յաջողած է։

—Թօփ-Գաբուի պալատան առաջին դռնապան Պէշիր աղա, որ երկար ատենէ ի վեր հիւանդ էր, մեռաւ և նմա յաջորդեց Սէրվէր աղա որ երէկուընէ իւր պաշտօնին ձեռնարկեց։

—Հալէպի Ֆրանսական հիւպատոս Պ. Ժիւլէն և Ադր. Պոլսոյ Ֆրանսական հիւպատոս Պ. Տէկրան ընտանեօք մայրաքաղաքս եկան։

—Գասըմ Փաշայի Ջինճիրլի Գույու թաղը բնակող Աբրահամ Ցակոբեան անուն քառասուն-հինգ տարեկան հայ մը իսլամական կրօնն ընդուներ և անունն ըստ իւր խնդրանաց, Իսմայիլ Հագգը դրուեր է։

—Կրէտէի Բարիզօրա անուն տեղը գտնուած զօրքերն, որոց չորս վաշտերը Սեբաստիայէն և երեքն ալ Լազգրատէն էին, իրենց տեղերը ղրկուեցան։

—Բերայի ոստիկանութիւնն աւստրիական հիւպատոսարանին յանձնեց զՏօքթ. Օ. Բայսէվիչ Թոմոֆ, որ, ինչպէս կը յիշուի, անցեալ շաբթու ձերբակալուեցաւ Բերայի Հունգարիա պանդոկը սնանկացուցած լինելու յանցանօք։ Այս անձ, որ բնիկ խուժան է, 16 ամսէ ի վեր Կ. Պոլիս կը բնակէր և մասնաւոր դասախօսութեամբ կ'ապրէր։ Բայսէվիչ մէկ քանի անձինք եւ մանաւանդ իւր նշանածը, գերմանացի դաստիարակուհի մը խաբելով ստակնին առած էր։

—Թարիքի ուղղեալ նամակ մը գանգատելով որ Թաղապետութեան Զ. շրջանակին պաշտօնեայք նպարավաճառաց և այլոց բոշխուած հականերեւական դեղերու իւրաքանչիւր շիշին համար 4 էն մինչեւ 12 ղրշ. գին կը պահանջեն, կը խնդրէ վերջնական գին մը որոշել։

Երիտասարդ մը որ ըստ բաւականին Թուրքերէն լեզուի հմուտ է կը փափաքի փաստաբանի մը քով գրագրութեան և գործակատարութեան պաշտօն վարել։ Բաւական տարիներէ ի վեր փորձառութիւն ըստացած է փաստաբաններու քով ծառայելով։

1161 3—3

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Ղալաթիա, Վօյվօտայի պահականոցին դէմ

Արեւելեան Ճաշարանն՝ որ Ղալաթիոյ բոլոր ճաշարանաց բաղդատմամբ զեղչեալ գներ որոշած էր իւր կերակրոց, իւր մեծարգոյ յաճախորդաց աւելի եւս դիւրութիւն մ'ընծայելու նպատակաւ ընդհանուր կերակրոց գնոյն վրայ նոր զեղչ մ'ալ ըրած է ներկայ ամրան եղանակին մէջ։ Այս առթիւ կը ծանուցուի արգոյ հասարակութեան թէ Արեւելեան Ճաշարանն յաճախող Պատ. անձինք՝ հակառակ գնոց աժանութեան, մեծապէս գոհ պիտի մնան, որպէս միշտ, կերակրոց զանազանութենէն և ընտրութենէն, ճաշարանին մաքրութենէն և սպասարկութեանց կանոնաւորութենէն։ Փափաքողաց տուներն ալ ճաշ կը ղրկուի, գոհացուցիչ պայմաններով։

1106 5—5

## ԴՐԱՄԱԿԱՆ

### ՂԱԼԱԹԻՈՅ ՊՕՐՍԱ

Ղալաթիա, 7 Սեպտեմբեր

Այսօր Ղալաթիոյ Պօրսան գոց է Հրէից տօնին պատճառաւ։

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՕՐՍԱ

| | |
|---|---|
| Լոնտոն, 17 սեպտեմբ. ժամ 5 վայր. 15 երեկոյ | |
| Անգլ. քօնսօլիտէ | 101 7/16 |
| Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ | 13 5/8 |
| » » » գոցուեցաւ | 13 5/8 |
| » » » Ա. | 21 1/2 |
| » » » Բ. | 14 |
| » » » Գ. | 13 1/2 |
| Օթօման 1871 | 74 |
| Փոխառութիւն 1877 | 86 |
| Պանք Օթօման | 9 3/8 |
| Ռուսական փոխառ. 1873 | 95 3/8 |
| Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) | 74 1/4 |
| » առանձն. (բրիվիլէժիէ) (*) | 98 1/8 |
| Տայրա Սանիէ | 71 1/4 |
| Տօմէնիալ (փոխառ. Ռօչիլտ) | 94 3/4 |
| Հունգարական պարտամուրհակ 4 % | — — |
| Փոխանակութիւն Բարիզի վրայ | 25 562 |
| Վիէննա, 11 սեպտեմբ. ժամ 4 երեկոյ | |
| Փոխանակութիւն Լոնտոնի վրայ | 126 15 |
| Օսմանեան երկաթուղի | 17 |
| Բարիզ, 17 սեպտեմբ. ժամ 3 վայր. 45 երեկոյ | |
| Ֆրանսական Ռանթ 4 1/2 % | 108 90 |
| » » 3 % | 81 22 1/2 |
| Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Գ. բացուեցաւ | 13 90 |
| » » » գոցուեցաւ | 13 87 1/2 |
| » » » Բ. | — — |
| » » » Գ. | 13 87 1/2 |
| Օսմանեան երկաթուղի | 34 |
| » Րէժիի բաժնեթուղթք | — — |
| Պանք Օթօման | 490 |
| Գրէտի Լիոնէ | 568 75 |
| » Ֆօնսիէ | 1365 |
| Բաժնետոմ Լիոնի | 1256 25 |
| Սուէզի ջրանցք | 1980 |
| Ռուսական 5 % 1877 ի | 100 1/4 |
| Իտալական Ռանթ | 98 25 |
| Սպանիական (արտաքին) | 67 1/2 |
| Եգիպտական միացեալ | 377 50 |
| Բրիօրիթէ Թիւրք | 352 50 |
| 5 % Հելլենական | 362 51 |
| Չէք Լոնտոնի վրայ | 25 40 |

### ՎՐԻՊԱԿ

Շաբաթ աւուր Ռիւտէրի հեռագրին մէջ, «Խորհրդարանական նստաշրջանն [illegible]», պէտք է կարդացուի «Խորհրդարանական նստաշրջանը [illegible]»։

ԱԶԴ
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՅԻ

Կը ծանուցուի օսմանեան հանրային պարտուց Միացեալ և Արձանագրեալ արժէթուղթերն ունեցող անձանց թէ, օսմ. հանրային պարտուց Վարչութեան օգոստոս 29ի ազդին համաձայն, կէս առ հարիւր (1/2 %) տոկոս մը պիտի վճարուի իրենց արժէթղթոց անուանական արժէքին վրայ։

Ուստի պարտին, 1887 սեպտեմբ. 1/13էն սկսեալ, իրենց Արձանագրեալ արժէթղթոց թիւ 11 և Միացեալ արժէթղթոց թիւ 8 կտրոններն հանդերձ ցուցակներով ներկայացնել Օսմ. Կայսերական Պանքային Պոլսոյ գրասենեակը, Թարաքճըլար փողոց, ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի, առաւօտեան ժամ 10էն մինչեւ 2 (Ը. Ե.)

Ի փոխարէն վերոյիշեալ կտրոններու, պիտի ստանան պատուիրագիր մը որով իրաւունք պիտի ունենան 10 օր յետոյ գանձելու իրենց ինկած տոկոսները։

Կ. Պոլիս, 30 օգոստոս 87

634 4—6

ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ ԱՐԺԷԹՈՒՂԹՔ

Կը ծանուցուի այն անձանց որք 1875 հոկտեմբերէն մինչեւ 1881 դեկտեմբեր Րումէլիի վիճակահանութեանց մէջ ելած արժէթուղթեր ունին, թէ յառաջիկայ սեպտեմբեր 1/13 էն սկսեալ 5 % առհասարակ մը պիտի վճարուի իրենց միմիայն ի Կ. Պոլիս, ուր արժէթղթեր պարտին ղրկուիլ արժէտեարց ծախքով։

Այս տրամադրութիւն կը լրացնէ 1881 դեկտ. 8/20 ի կայսերական հրովարտակով այդ արժէթղթոց յատկացեալ 20 % վճարը։ Հետեւաբար կը ծանուցուի արժէտեարց եթէ յիշեալ հրովարտակին Ա. յօդուածին Ը. հատուածին տրամադրութեան համաձայն, այդ արժէթուղթերը շրջաբերութենէ պիտի քաշուին երբ ներկայ [illegible]։

Կ. Պոլիս, [illegible] 1887

880 3—3

# "ԱՐԵԳԱԿ"

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| Ամերիկայի համար | տարեկան | 2 1/2 | տոլար |
| » » | վեցամսեայ | 1 1/2 | » |
| Եւրոպիոյ » | տարեկան | 12 | Ֆրնք. |
| » » | վեցամսեայ | 7 | » |
| Թուրքիոյ » | տարեկան | 2 1/2 | մէճիտ |
| » » | վեցամսեայ | 1 1/2 | » |

Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը խմբագրութեան վրայ է:

ԱՐԵԳԱԿ, Միացեալ Նահանգաց անդրանիկ Հայ լրագիրը, պիտի հրատարակուի քանի մ'ամսէ վերջ, Նիւ-Եորքի մօտերն, առ այժմ շաբաթը մի անգամ: Հրատարակութեան բուն թուականը պիտի ծանուցանենք երկրորդ ղեկոյցով:

ԱՐԵԳԱԿ նպատակ ունի Ամերիկեան Հայ գաղթականութեան ու մայր հայրենիքի մէջ ազգային կապ մ' լինել:

ԱՐԵԳԱԿ պիտի պարունակէ Գրական, Ուսումնական, Արհեստական և այլ պիտանի յօդուածներ: Եթէ յուսացեալ քաջալերութիւնը չի զլանայ Ազգը, մտադիր ենք երբեմն օգտակար մեքենաներու պատկերներ դնել:

ԱՐԵԳԱԿ իւր թերթօն պիտի հրատարակէ ազգային նշանաւոր գործիչներու, եկեղեցականաց, խմբագրապետաց, զօրավարաց ու հեղինակաց կենսագրութիւնը, շատերու պատկերները դնելով: Նմանապէս մէն մի տարւոյ մէջ ազգային կեանքի վերայ գրուած լաւագոյն վիպասանութեան հեղինակի պատկերը պիտի ջանանք տալ:

ԱՐԵԳԱԿ բնաւ պաշտօն չունի այսինչ կամ այնինչ կառավարութեան, մասնաւորապէս Թուրքիոյ և Ռուսիոյ ընթացքը քննադատել: Սա պատուաւոր խոստում մ'է, Քանի որ Արեգակի նպատակն է օգտակար լինել Հայութեան, հետեւաբար պարտի զգուշաւոր լեզու մ'ունենալ միշտ:

Ամերիկայի մէջ Հայ լրագիր մը հրատարակելու անթիւ դժուարութիւններն աչքի առջեւ ունենալով, Հայ հասարակութիւնն ինքնին կրնայ մտածել թէ խմբագրութիւնն որչափ պէտք ունի Ազգին քաջալերին ու օգնութեան:

Ընթերցասէր ու ազգասէր Հայ հասարակութեան վրայ յոյս դնելով է որ կը յանդգնինք մեր կարողութենէ վեր՝ գործի մը ձեռնարկել:

Կոչում ընելով այս առթիւ ազգի յառաջդիմութեան ու Ամերիկայի Հայ գաղթականութեան պահպանման փափաքող ազգասիրաց զգացման, կ'ակնկալենք այժմէն ունենալ մեզ բաժանորդիլ փափաքող անձանց անուններն ու հասցէներն, որպէս զի ըստ այնմ կարողանանք կարգադրութիւններ ընել:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ Թղթով ուրիշ անգամ մը, [illegible]

Տէր [illegible] Հ. ԷԿԻՆԵԱՆ

Յ. Գ. Մեզ ուղղելի ո՛ր և է նամակ կամ ծրար ղրկուելու է առ

H. Eguinian
93, P. O. Box West Hoboken N. J.
U. S. America

## ՀԱՅՔ Ի ԿՐԵՏԷ

ՔԱՆՏԻԱ, 26 Օգոստ.

Երբ քառորդ ի վեր հայ քահանայք Ս. Պատարագի շնորհն աստ վայելած չէին. արտասուագին աչօք աղաչեցին որ սոյն հոգեւոր մխիթարութիւնը տամ. Ի՞նչ ընէի, երբ սկիհ և տիրացուներ չկային. յանկարծ միտքս ինկաւ Մեծին Սահակայ Պարթեւ Հայրապետի Պատարագամատոյցն, այն է Խորհրդատետրը գործածել (*), որ թէ՛ կարճ է և վսեմ, և թէ շատ մը երգերով խճողուած չլինելով՝ շատ մը սպասաւորներու պէտք չունէր, և զոր Հայք պատերազմներու մէջ կը՛կատարէին, անուանելով բանակի պատարագ: Կիրակի առաւօտ է, Հայ տիրացու մը փողոցներու մէջ կը ձայնէ՝ բիրն երեցս ի գետնին զարնելով. «Ո՛վ բարի քրիստոնեայք, եկայք ի Ս. Կարապետ». աւուր ժամերգութենէն յետոյ խորանը կը փակուի մեծ վարագուրով. սկիհ չկար, գաւաթ մը օծեցի և յետոյ անապակ գինի մէջը լեցուցի. Հաւատամքի ատեն վարագոյրը կը բացուի, և ահա սեղանը զարդարուած կը տեսնուի տասներկու մեղրամոմերով, որոց ի մէջի միայն մէկ Խաչ և մէկ Աւետարան. աւագ խորանի մեծ պատկերն աջաւոր տեսիլ ունի, Տէր Յիսուս Թաբօր լերին վրայ այլակերպած և աջն բարձր բան զգլուխ խաչանիշ կ'օրհնէ զաշխարհս, քովն են Մովսէս և Եղիա, և Յիսուսի երեք աշակերտներն՝ որք սարսափահար ի գետին թաւալած են. Հազարաւոր բազմութիւն մը Յոյներու և Թուրքերու խառնուած են Հայոց մէջ. միայն երկու տիրացու կան բեմին վրայ շապիկ հագած. տիրացուն կը ձայնէ. «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան» և Ս. Խորհուրդն ու աջս համբուրելով՝ ըստ հայկական սովորութեան՝ եկեղեցականին կուտայ առաջին ողջոյնն և նա իւր քովի Հայուն, այսպէս հայք իրարու կուտան, այլ սական այլազգիք ևս սոյն ողջոյնն իրենք ալ առնլով իրարու կուտան, և կանայք ևս որք վերնատունը խառնուած էին, կ'առնուն ողջոյն. Պատարագը վերջանալու վրայ է, տիրացուն բարձրէն կը ձայնէ «Օրհնեա Տէր». կը դառնամ առ ժողովուրդն՝ որք չոքած են և կը գոչեմ. «Սա է կեանք, յոյս, յարութիւն և քաւութիւն մեղաց». Յոյնք անդադար խաչակնքելով յունարէն «Տէր ողորմեա» կը մրմնջեն. վարագոյրը կը ձգուի և կը վերջանայ Ս. Պատարագի արարողութիւնն. Յետոյ շուրջառազգեստ, վեղար ի գլուխ և գաւազան ի ձեռին, ի ձայն Հոգեհանգստեան շարականի դնելով ի գերեզմանատուն, Անդաստան կը կատարեմք և անդ կ'առնեմ «Հոգւոց» այն հոգիներուն՝ որք հայրենեաց սուրբ կարօտովն անդ ննջած էին երկուքուկէս դարերէ ի վեր:

Բայց ի՞նչ ըրած ունի Կրետէն Հայ ազգին.— մեծ և աչագին մարդ մը տըւած է Հայոց աշխարհին. ո՞վ էր այդ մեծ մարդը.— Քանտիացի Աբրահամ կաթողիկոսն՝ որ սիրելի լինելով Պարսից Շահ Թահմազ Ղուլի այն է Նատր-Ալեայ նման աշխարհաասասան թագաւորի մը, շատ բարիք ըրաւ Հայ ազգին. պատմենք թէ ինչպէս.

Նատր-Ալի՝ տակաւին պատանի՝ օր մը Ասպանայ Հայոց վանքը մտնելով ծերունի Աւետիք վարդապետին կը ներկայանայ, և կը խնդրէ գիրքը բանալ և իւր սա երազը մեկնել. «Նիստ ի ձի կ'որսայի ի Խորասան, յանկարծ առւ մէկ գայլ յարձակեցաւ դէպ ինձ, խիզախեցայ և տէգս նետելով սպաննել ուզեցի, այլ ի զուր. Ձիս խրտչելով գլորեցայ, այլ սակայն աճապարեցի, ի գայլուն կռնակ ցատքեցի, երկու ականջներէն բռնած կայի, յետոյ երկաթեայ գաւազանս որ մէջքս էր, գայլին մէկ ականջէն խոթելով և միւսէն հանելով սատակեցի. յետոյ մտրուկս որ ծառի մը մօտ ինձ սպասելով կը խրխնջէր, վերստին թամբելով հեծայ. այս դիպուածէն հազիւ շունչ առած ձիուկս կը մտրակէի, ահա արջ մը անտառէն ելնելով յարձակեցաւ, իսկոյն տէգս արջուն ճակտին շեշտակի զարնելով սատակեցի. Այս փորձանքէն ևս հազիւ ազատուած՝ ահա փայլակնացայտ աչօք, ցցուած բաշիւք, սուր սուր և խոշոր ակռաներով առիւծու մը մռնչիւնը լսեցի, սարսափած ապշած էի, երբ յանկարծ ձայն մը լսեցի, որ էր. «Մի՛ երկնչիր, Նատր, օն, նետուէ ի կռնակ առիւծուն, պլլուէ բաշերուն և բզէ՛». Գրեթէ բոլորովին խելայեղ՝ յուսահատ ճգամբ կատաղաբար ցատքեցի. Բաղդս յաջողեցաւ. զիս ի կռնակ առիւծուն գտայ, որ հանդարտ ու խելօքիկ ինէ կը բզուէր, իսկ ձիուկս հեռուէն ցնծութենէն առն ի գետին տրոփելով կը ցատքէր. Այս վիճակին մէջ էի, երբ յանկարծ մէկ տէգ, Աստուծմէ՞ ըսեմ թէ սատանայէ, ի կողս մտնելով զիս արիւնաթաւալ ի գետին տապալեց. Առիւծն ու ձիուկս ողորմագին յիս նայելով կը լային. Իսկ ես սարսափէս զարթեայ և ահա երազ էր»:

Վարդապետն այս անձին վայելուչ կերպարանին և հսկայ ու ահեղ հասակին նայելով, դողահար կը բանայ Աւետարանը, և յետոյ Նատրի նայելով՝ կը ծնրադրէ հայերէն կակազելով. «Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով»: Նատր Թուրքերէն «Ի՞նչ ըսել կ'ուզես» կ'ըսէ. Վարդապետը կը պատասխանէ. «Տէր Յիսուս խաչին վրայ երբ կը մեռնէր, աւազակն զայս խնդրեց. ես ևս նոյնպէս կ'աղաչեմ որ յիշես զիս և ազգս, երբ որ թագաւորես, վասն զի ձին իշխանութիւնդ է ի Խորասան, գայլն Աֆղանստանն, արջն Հնդկաստանն, իսկ առիւծն Պարսկաստանն են. Որդեակս, պիտի տիրես այդ աշխարհներուն, յիշես զիս և ազգըս». Նատր այս մեկնութենէն գոհ և քաջալերեալ աւազակութեան կը ձեռնարկէ և քայլ առ քայլ կ'սկսի սարսափ ձգել դէս ու դէն:

1722ին Աֆղանք ապստամբելով յաղթանակաւ կը տիրեն ամբողջ Պարսկաստանի, Աֆղանն Մահմուտ շահ կը հըռչակուի յԱսպահան. Թագաժառանգ Հիւսէյինն շահի որդի Շահթահմազ ի Մազանդարան փախստական և անտի ի Դավրէժ կը բողոքէ այս բռնաբարութեան դէմ. Նատր այս դիպուածէն առիթ գտնելով, թագին օրինաւոր ժառանգին հնազանդութիւն խոստանալով՝ բանակի սպարապետ կը կարգուի. Ճիշդ այս ատեն օսմանեան թագաւորն Սուլթան Ահմէտ, 1723ին Քէօփրիւլի Ապտուլլահ փաշայի սպարապետութեամբ բանակ կազմելով կը յղէ ի Պարսկաստան, որ լի էր երկպառակութեամբ և խռովութեամբ. Օսմանցիք հետզհետէ տիրելով Երեւանայ, Նախիջեւանի, Գանձակայ և Դավրէզի կը հասնին մինչեւ Համատան, ուր Աֆղան Մահմուտի յաջորդ Էշրէֆ Խան թէեւ կը ճակատի, այլ սակայն յաղթուելով կ'ստիպուի հաշտուիլ և ապա դիմել Նատրայ դէմ, որ հզօրացած՝ հասած էր մինչեւ ի դաշտն Դամղանայ. կը յաղթէ Նատր, կը տիրէ Ասպահանի, ուր Շահթահմազի գլուխը դնելով թագըն, երկրին շահ կը հրատարակէ. Ապա հաշտութեան դաշնագիրն որ կնքուած էր Էշրէֆի ձեռամբ, անվաւեր հռչակելով՝ կը դիմէ յՕսմանեանս և կը հասնի յԵրեւան և անտի դառնալով կ'երթայ յԱֆղանստան. Սուլթան Մահմուտ Ա. Հէքիմզատէ Ալի փաշայի հրամանատարութեամբ բանակ մը կը յղէ. Շահթահմազ առանց իմաց տալու Նատրայ, Գուրիճան դաշտի մէջ կը ճակատի. Օսմանցիք կը յաղթեն և յաղթականին կը խոնարհի Թահմազ. Նատր Թահմազի այս անթոյլ պարտութեան դէմ զայրացած՝ կայծակի պէս կը հասնի, և բռնելով Թահմազը, կը բանտարկէ, յետոյ նորա մանկիկը Շահաբաս շահ հռչակելով՝ կրկին կը յարձակի յՕսմանեանս և կը հասնի մինչեւ ի Տփղիս, ուր լսելով Աֆղանստանի ապստամբութիւնը, կը հաշտուի առժամապէս ընդ Օսմանեանս և կը դիմէ հոն. Յաջորդ տարին նորէն կը յարձակի յՕսմանեանս, Ախուրեան գետին մօտ Ապտուլլահ և Սարիմ Մուսթաֆա փաշաներու 50,000 բանակին դէմ 18,000 զօրքով կը ճակատի. Նատրայ աստղը փայլուն է, 40,000 օսմանցիք կը փռուին, ինչպէս նաև Ապտուլլահ փաշա և պարթենկոտ Քոռ Զաւուշ և կը թողուն պարսից 60 թնդանօթ. Այնուհետեւ Նատր տէր կը լինի ամբողջ վերին Հայաստանի, Վրաստանի և Կաւկասի:

Տակաւին այս մեծ պատերազմը չըդադարած՝ ծերունին Աբրահամ կաթողիկոս լսելով Նատրայ հասնիլը, Հայ մելիքներու հետ կը ներկայանայ. Նատր կը յիշէ երազն ու մեկնիչը, որ աղաչած էր ըսելով. «յիշեա զիս և ա՛զգս». Նատր ցնծագին դիմօք, «խօշ գէալտըն, Խալիֆա, նէճէ սէն, չաղ սան, տէ ալլահ կէօտէք էլսըն» այսինքն «բարով եկար, կաթողիկոս, Ի՞նչպէս ես, առո՞ղջ ես, օ՛ն, ձիով երթանք յառաջ». Կաթողիկոսը Նատրը կը հրաւիրէ յԷջմիածին, որոյ գալստեան նկարագիրը աւասիկ, գրուած նոյն իսկ կաթողիկոսէն. «Ես վաղվաղակի զգեստաւորեցայ և միաբանքն ամենայն շուրջառով և մանկունքն շապկով, և խաչալամով, բուրվառ բարձր մոմերով, թափորական պատրաստութեամբ գնացեալ առ նա և առեալ մեծաւ փառօք բերաք ի սուրբ Աթոռն, և մտեալ ի սուրբ տաճարն առաջի սուրբ Իջման տեղւոյ կանգնեցաւ և եհարց թէ զի՞նչ տեղ է և վասն է՞ր Կաթուղիկէս, նոյնպէս և վասն պատկերացն և վասն մեծ կաթուղիկէին և շինմանն և շինողացն, և ըստ պատշաճի տուաք զպատասխանին, և եղեալ առաջի աւագ խորանին աթոռ և խալիչայ և հրաւիրեցի անդ նստիլ, որ և նստաւ վաղվաղակի, և հրամայեաց ժամ ասել, և ասացաք զերեկոյեան ժամն, զի էր ի տօնի սրբոց Հռիփսիմեանց և օրն երկուշաբթի, և ինքն նստեալ հայէր և ուրախանայր, առժամայն զիս յորդորեալ ծերագոյնքն ի միաբանից, կանգնեցուցին ի կաթողիկոսարանի զգեստով իմով, և յետ ասելով զերեկոյեան ժամն, կրկին յորդորեցին զիս ծերագոյնքն թէ ծանուցումն և շնորհակալութիւն արա, և օրհնեա՛, որպէս և արարի իսկ. և վասն զի այլազգեաց լեզուաւ խնդրեաց Խանն և ես այնպէս խօսեցայ առաջի իւր, յորմէ ուրախացեալ եղեւ. Եւ յետ արձակմանն ելեալ արտաքս եկեղեցւոյն և ետուր ձեռամբ Միրզին իւրոյ 300 [illegible] ողորմութիւն և գնացի ես մինչ ի մէջի դուռն և յետս դարձոյց զիս և ինքն գնաց ի բանակն»:

Ապա Կաթողիկոսը լսելով Նատրայ յաղթութիւնն որ տարած էր Ապտուլլահ փաշայի վրայ, դիակներու մէջէն անցնելով կրկին կը ներկայանայ, քանի մը օր հիւր կը լինի Նատրայ և սեղանակից. Եւ որովհետեւ կը փափաքէր Խանին ընկերանալու, Խանը կ'ըսէ. «Խալիֆայ, մուրախխաս արարի զքեզ, գնա բարով ի քո Մանաստուրն, և աղօթեա վասն մեր». երբ կաթողիկոսը դժուարութիւն կը յայտնէ, կը կրկնէ. «[illegible] ես, խեղճ ես, ափսոս ես, դարձիր դարձիր ի տեղի քո և [illegible] արա մեզ». Կաթողիկոսն յԷջմիածին, իսկ ինքն ի Թիֆլիս կը մտնէ յաղթանակաւ, ուր և կը հրաւիրէ Կաթողիկոսն ու հայ մելիքները. Հոն Նատր Կաթողիկոսին հրովարտակաւ կը շնորհէ Եօթն գիւղեր իբր միւլք Էջմիածնի. Ապա անտի մեկնելով կը բնակի Մուղան դաշտի մէջ և կը հրաւիրէ հոն բոլոր Պարսկաստանի խաներն, հայ կաթողիկոսն ու մելիքներ և կ'առաջարկէ Պարսկաստանի համար թագաւոր մը ընտրել, և թողուլ որ ինքն այլ ևս ի Խորասան իւր գիւղին մէջ քաշուի. Կ'ընդդիմանան և կ'աղաչեն որ Նատր ինքն առնու թագը. Նատր կ'ընդունի, բայց երեք պայման առաջարկելով. «Լսեցէք, Խաներ, Սուլթաններ, Պէկլեր, Աղաներ, Հայոց Սէրէֆրազ, Խալիֆա, Քէտխուտէք, Այաններ և ամենայն եղեալք... Նախ յետ ժամանակաց, եթէ Շահի որդի կամ ազգական յայտնի և երեւի, նորա հետ չմիաբանիք և [illegible] չընէք և [illegible]. Երկրորդ, [illegible] և զհայհոյանքն որ տայիք Օմար-Օսմանին, այսուհետեւ այլ չասէք և ի Նաւրուզ-Պայրամին զգեմս ձեր չի ցտէք և չարինցնէք վասն Նահասին-Հիւսէյինին... զի վասն այն հայհոյանաց պատճառէն՝ այնքան արեանց հեղմունք լինի մեր [illegible] երկուց ազգաց և թագաւորութեանց, մէջն Իրանին և Թուրանին... զի մեր և նոցա մարգարէն մի և նոյն է, նոյնպէս Ղուրանն. Մի է և Նամազն, որովհետեւ Օսմանցիք զձեռս ի վերայ սրտին դնելով կատարեն, իսկ մեք զձեռս ի կախ պահելով և արձակ. Նոյնպէս և եղիցի, նոքա զիւրեանցն և մեք զմեր ծէսն արասցուք, եւ միմեանց նախատինս մի՛ դիցուք... Երրորդ, զի որպէս զիս կամեցայք թագաւորել, յետ իմոյ անցմանն իմ [illegible] եւ իմ զաւկիս [illegible] չանէք, այլ հնազանդ միայք յաւիտեան և զայս երիս բանս [illegible] եւ գրով արձանացուցեալ կնքեսջիք եւ տայջիք ինձ, ի՞նչ կ'ասէք. յանձն կ'առնէ՞ք թէ ոչ.» Եւ ամենեքեան ի մի բերան գոչեցին. «այո, կամիմք եւ յանձն առնումք և հնազանդիմք». Եւ առ ժամայն կարդացին [illegible]... եւ սկսան ամենեքին զձեռս ի վեր ունենալով անմռունչ չարժել զշրթունս իւրեանց, իբր թէ զհամդէն կարդան. Բայց ոչ գիտեմ, գիտէ՞ին եւ ասէին թէ ոչ. Նոյնպէս եւ ես (կաթողիկոսն) տարածմամբ ձեռացս ասացի զՀայր մեր որ յերկինս. եւ յաւարտն նոքա զերկոսին ձեռս իւրեանց ընդ երեսս փարեալ շօշափեցին զմօրուսս իւրեանց, իսկ ես շնորհօքն Քրիստոսի, յայտնապէս խաչակնքեալ զդէմս իմ... Վիլինամաթին հայէր... ասաց «Հայ Խալիֆա, կեալ պուրեա, եախուն կեալ» եւ մերձեցայ մերձ ի նա, ուր նըստեալ էր ի բարձրաւանդակ [illegible] որ որ և ասաց կրկին. «պիլիրսան, Խալիֆա, սապահ եօխ օ պիրիսի կիւն սանի մուրախխաս էտէրամ», որ ես պատասխանի առնեալ ասացի. «վալինամաթին օմրի տովլաթի զիյատէ օլսուն, վէ ումարամ պարի Խուտատան փարվարտիկեարտան, քի Նասրը ճէնապընըզի ֆէթի Իրան կէօրտիւմ, ինշալլահ ֆէթի Ղանտահար վէ ֆէթի Հինտիսթանա կէօրէյիմ». Յոր և ծիծաղեցաւ ուրախութեամբ և զուարճացեալ բերկրեցաւ և ասաց. «պարիգալլահ, Խալիֆա, պարիգալլահ». Յետոյ կաթողիկոսը համարձակութիւն կ'առնու ինչ ինչ շնորհներ խնդրելու, որ և իսկոյն կը կատարուին:

1836ին փետր. 26 հինգշաբթի օրը ժամը 5ին Նատրի գլուխը կը դնէ Միրզէ Զաքին Պարսկաստանի ոսկեղէն սադաւարտանման ականակուռ թագը, Խանք ի ծունր կ'երկրպագեն Նատրայ, և այսպէս աւազակն Նատր թագաւոր կը լինի, ինչպէս արդէն երազած էր. Ցոյց տալու համար Նատրայ անհուն սէրը կաթողիկոսին վրայ, կ'արժէ հետեւեալն արտագրել. Մեկնելու օրը կաթողիկոսը լալով կ'աղաչէ որ Նատր իւր [illegible] (կաթողիկոսէն) և [illegible] անպակաս ընէ. Նատր կը պատասխանէ. «Ալամ չագմա, Խալիֆա, օ թէքքէ մանում տուր, սան տա մանում սան, կէթ պիր ղօչա քիշի սէն, կէթ համան տուա էյլէ». և ապա Շէյխիսլամն ևս համարձակեցաւ և ասաց զուռայ մի պարսկերէն գրաբար ի չափ երկու տան սաղմոսի և ապա զհամդէն ասացեալ և ես զՀայր մեղան, շնորհակալեցաք և արձակեցաք յերեսացն և գնացաք»:

Նատր տակաւին չթագաւորած ի Մուղան ընդունեց Օսմանցւոց Կէնճ-Ալի փաշա դեսպանն ինչպէս եւ Ռուսաց դեսպանին, որոց եւ խաներուն եւ կաթողիկոսին, որ բոլոր խաներէն վեր միայն Նատրայ [illegible] եւ փոխարքայ Թիֆլիզի Վալիէն վար նստած էր, փառաւոր պատիւներ ըրաւ. յետոյ Ասպահան երթալով բոլորովին նուաճեց Աֆղանստանը եւ Հնդկաստան մտնելով տիրեց Տէլհի մայրաքաղաքին, գերեց գերփեց երկիրը եւ ապա դարձաւ Խորասան, ուր գիշեր մը սպաննուեցաւ վրանին մէջ դաւաճանութեամ մը:

Աբրահամ կաթողիկոս այսպիսի ահաւոր մարդու մը բարեկամութիւնը վաստկեցաւ, ի՞նչ ըրաւ այս կաթողիկոսն հայ ազգին, շէնքե՞ր կանգնեց, տաճարնե՞ր շինեց. ո՛չ. Արդի հայ եկեղեցականներու եւ ազնուականներուն նման նիւթական շէնք ու տաճար չը կանգնեց. Հանգուցեալ եկեղեցիներու գերեզմանոցներու սիրով չըրաբաղեց երբեք իւր սիրտը, այլ կենդանի տաճարներ կանգնեց, հոգիներ փրկեց, այսինքն հայ գերիներ ազատագրեց, մերթ աղաչելով, մերթ դնելով. եթէ հարկ լինէր, Էջմիածինն էլ կը ծախէր, [illegible] հայ մը չկորսուի, չընկնի հաւատքէն, չմեռնի գերութեան կամ ղարիպութեան մէջ. Պատմութիւնը ցոյց կը տայ թէ այս ծերունին Նատրայ բանակին ետեւէն կ'երթար. Թիֆլիս և Դավրէժ իւր ոտքին տակ [illegible] միշտ գերիներ ազատելու համար Նատրէն առած խիլաթներն և դրամները հայ հոգիներու փրկութեան համար սպառեց. բնաւ շէնք մը չը շինեց, որպէս զի անունն անմահանայ, մարդկային այն շէնքին միայն նայեցաւ, այն հայերուն, որք Աստուծոյ կենդանի տաճարներ էին, մինչդեռ մեք այսօր անհոգ անհոգ կը լըսենք թէ դէս ու դէն հայեր կը կորսուին, կ'ընկնին հաւատքէ, զի հայ քահանայ չը կայ, կամ գէթ այցելու չը կայ. Օրինակաւ մը հաստատենք թէ որքան անհուն էր կաթողիկոսի հոգիներու փրկութեան վրայ ունեցած եռանդը. Կաթողիկոսը բողոքելով Նատրայ ի Մուղան բերել կուտայ Նախիջեւանի Միրզէն, որ հայ աղջիկ մը առեւանգած և կին ըրած էր իրեն. Հայ աղջիկն ու Խանը կը բերուին, սարսափելին Նատր կը հրամայէ [illegible] տակ Խանին հոգին հանել, բոլոր միւս մեծամեծ Խաներն ի գութ շարժելով կաթողիկոսին ոտներուն կը պլլուին, շատ բան կը խոստանան որ [illegible] այս աղջըկէն, որուն այդ Խանը սիրահարած լինելով չէր կրնար զատուիլ. Կաթողիկոսն այսքան Խաներուն սիրտը կոտրել ևս չէր ուզեր, բայց ի՞նչ ընէր. — յանկարծ սա առաջարկը կ'ընէ. «Եթէ այդքան կը պնդէք որ ես հրաժարիմ աղջիկէն, ուրեմն տուէք ինձ ձեր ազգէն պատանի մը, որ մկրտեմ և պսակեմ հայ աղջկան մը հետ». Խաներուն համար այս բան անկարելի լինելով՝ կը լռեն և Նատր գոհ լինելով կաթողիկոսի այս անչափ ազգասիրութենէն, աղջիկը կը շնորհէ, որ և յետոյ փառաւորապէս կը պսակուի հայու մը հետ. Ահա կաթողիկոս մը, որ ՄԻԱՅՆ հոգւոյ մը փրկութեան համար կը զոհէ ամէն բան, մինչդեռ մեր սրտերն այսօր այսպիսի զգացումներէ դարտակ են:

Ահա Կրետէն տուած է հայ ազգին այս երանաշնորհ կաթողիկոսն, որոյ հայրն Արմենոս թէեւ չը ծառայեց իւր ազգին և հայրենեաց, այլ սակայն Աստուած կամեցաւ որ որդին իւր հօր այս պարտքը հատուցանէ Ս. Լուսաւորչի նման, և կատարելապէս կատարէ. Աբրահամ կաթողիկոսի անունը հայ ազգին մէջ չէ մոռցուած, Արմենոս անունն ևս Կրետէէն չէ ջնջուած, տակաւին մինչեւ ցայսօր Հանեայի մօտ կան երկու գիւղեր որք Արմենոսի անունը կրելով վերի և վարի կամ մեծ ու փոքր Արմենոս կը կոչուին:

Կը թուի թէ Կրետէի հայ գաղթականութիւնն հին ժամանակէ կ'սկսի, վասն զի Հանեայի յունաց գերեզմանատան մէջ կայ շիրիմ մը որ երկաթեայ ցանկով պատուած է, որ և արձանագիր ունի նախ քան զվեց հարիւր տարի և է Ագուլեցի Յարութիւնի:

Անցորդ պատուաւոր հայ մը, երեկ Քանտիա գալով Թուչուն Ս. Աստուածածնի ուխտ ընելէն յետոյ՝ ամսական կապեց եկեղեցւոյ բոլոր իւղին համար, այսինքն իւղի ամբողջ տարեկան ծախսը վճարեց Ուսթա Հասանի, որ ամէն ամիս տայ եկեղեցպանին, և կանթեղները միշտ վառ մնան. Եւ պայմանադրեց որ Հասան տայ իւղը մինչեւ իւր մեռնելուն օրն, հաշիւն ի... ղրկելով:

Ե՜րթ ի խաղաղութիւն, ո՛ այրդ Աստուծոյ, օրհնեալ լինիս և յիշատակդ օրհնեա՛լ, ո՛ Հայու հարազատ որդեակ:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՑԻ

---

(*) Մեծն Խոսրով Անձեւացի սոյն Պատարագամատոյցի մեկնութիւնն ըրած է համառօտակի և գերազանցանալի գրչով:

---

ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ՄԷՋ ԳՈՐԾԱԾԵԼԻ
ԱՄԵՆ ԴԱՍԱԳՐՈՑ ՀԱՄԱՐ
Դիմել ի Գրատունն Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ, Պոլիս Սուլթան Համամ Թիւ 14

Ըստ որոշման Պատկ. Խառն Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչութեան ազգային վարժարանաց մէջ պիտի մտնեն ՄԻԱՅՆ այն դասագիրք որք ընդունուած են Պատ. Ուսումնական Խորհրդոյ կողմանէ եւ կը կրեն Պատ. Կրթական եւ Ելեւմտական Տեսչութեանց կրկին կնիքներն. Գրատունն արդէն պատրաստ ունենալով այդ դասագրքերէն ԿՆՔԵԱԼ ԵՒ ՎԱՒԵՐԱՑԵԱԼ, պատիւ ունի հրաւիրել բոլոր հայ վարժարաններն, թէ աստ և ի գաւառս, ուղղակի դիմել իրեն այդ դասագրոց հայթայթման համար. Մասնաւոր խնամք կը տարուի գաւառներէն եկած յանձնարարութեանց ընդ փոյթ և ճշդիւ գործադրման, լաւագոյն պայմաններով:
511 6

ՏՕՔԹԻՕՐ ՏԻՐԱՆ ՔԱՐԱՄԱՃԻ մասնագէտ մանկաբարձ, պատիւ ունի ծանուցանել իւր Արգոյ յաճախորդաց թէ՝ իւր բնակութիւնն այս անգամ փոխադրած է Բերա, Ապանօզ փողոց, Թիւ 6, ուր պատրաստ է իրեն դիմող հիւանդները դարմանել ամէն օր, յետ միջօրէի, ժամ 8-11 ըստ տաճկաց: 1112 8—20

ՇԱՀԱՒՈՐ ԱԶԴ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՌՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

Այս անգամ 106րդը պիտի քաշուի յառաջիկայ եւրոպական Հոկտեմբեր 1ին, այսինքն սեպտեմբեր 19ին ըստ Յունաց:

500 թիւեր պիտի շահին: Առաջին պարգեւն է՝ **300,000** և երկրորդը՝ **25,000** ֆրանք:

Ասոնցմէ զատ՝ 48 թիւեր ևս մեծ պարգեւներ՝ իսկ մնացեալ 450 թիւերը 400ական ֆրանք պիտի շահին:

Շահելի գումարին ամբողջն ստանալու իրաւունք ունեցող բաղդատոմսին գինն է 5՝ կէսինը 3՝ և մէկ չորրորդինը 2 դահեկան:

Բաց ի ասոնցմէ գնողաց համար ամենէն նպաստաւոր պայմաններով ևս բաղդատոմսեր հրապարակ հանած եմք, այնպէս որ այլ ևս սոյն վիճակահանութեան չմասնակցիլը չարժեր, հետեւեալ պայմաններով.

| | | ֆրանք |
|---|---|---|
| 5 | հատ տարբեր տարբեր թիւեր | 5 |
| 10 | » » » » | 10 |
| 20 | » » » » | 20 |
| 50 | » » » » | 50 |

որք շահելի գումարին միայն հինգերորդ մասին իրաւունք ունին. [illegible]

Դիմել ի Ղալաթիա [illegible] Թիւ 33, [illegible]
517

ԱԶԴ

Պատիւ ունիմ ծանուցանել ազգիս հասարակութեան թէ [illegible]

[illegible]
Փ. Տ. ՄԱՖԱՄԱՐԵԱՆ
Ղալաթիա, Կէօշէ Օղլու խան, 4
928 29—30

ԻԼԱՆ

[illegible]

1 Յուլ. 303 1168

ԻԼԱՆ

ՓԱՂԻ ՍԻՐԱՓԷՐԻ

[illegible]

5 Յուլիս 1887 1099
Նօ. 5 1—3

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
Ի ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՒԱՌՍ
ՄԱՆՈՒԷԼ Գ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆԻ
Բաժանեալ յերիս մասունս

Սոյն երկասիրութիւն որ Սահակ Մեսրոպեան գրական մրցանակի առաջին աստիճանին արժանացաւ, կը վաճառուի ամեն հայ գրավաճառաց քով, և կեդրոնատեղին է Ասլանեան Եղբարց գրատունը, Պոլիս, Զագմոգճըլար - Եօքուշու, Թիւ 51:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին: Զոհացուցիչ զեղչ կը լինի, մանաւանդ աւելի գնողաց համար:

Ա. և Գ. մասերն՝ 8ական, իսկ Բ. մասը 10 ղրուշ:

1119 2—3

ԱԶԴ
ՌՈՊԵՐԹ-ԳՈԼԷՃ

Վարժարանիս նոր Տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր 3/15ին: Գիշերօթիկք կը վճարեն տարեկան 44 ոսկի օսմ., իսկ ցերեկեայ աշակերտք՝ 10 ոսկի օսմ.: Աւելի տեղեկութեանց համար պէտք է դիմել ի վարժարանն՝ ի Ռումէլի-Հիսար: 1076

ԱԶԴ

Գ. Տ. Մանէթոյի դրամատունն ի Ղալաթիա կը ծանուցանէ հասարակութեան թէ յառաջիկայ հինգշաբթի և ուրբաթ 22 և 23 սեպտեմբեր տեղի պիտի ունենայ Պրունսվիքի մեծ-դքսութեան շահաւէտ Լօդըրիին 4րդ վիճակահանութիւնը:

Մէկ ութերորդ տոմսին գինն 70 ղրշ. մէկ չորրորդ տոմսին գինն է 140 ղրշ.:

Հոկտեմբեր 1ին (Ն. Տ.) տեղի պիտի ունենայ Արքունի փողերանոցին մէջ Ռումէլիի երկաթուղեաց արժէթղթոց վիճակահանութիւնը:

500 թիւեր անպատճառ պիտի շահին:

Մեծ բաժին 300000 ֆրանք.

Ամբողջ տոմսին գինն է 5 ղրշ. կէս տոմսինը 2, քառորդ տոմսինը 2:

50 տոմսի ի միասին ի միասին մէկ հինգերորդին իրաւունք ունեցող տոմսին գինն է 60 ղրշ. 25 ինը՝ 30 ղրշ. 10 ինը՝ 12 ղրշ. 5 ինը՝ 6 ղրշ.:

Այս տոմսերէն ունենալ փափաքող անձինք պարտին ժամանակին դիմել դրամատանս գրասենեակը: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 1070

1—5 Ժ. Տ. ՄԱՆԷԹՕ

# ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

531

**ՆՈՐԹԷ ԲՐԻԹԻՇ ԵՒ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ**

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 5,978,946
ՀԱՍՈՅԹ 1885 ՏԱՐՒՈՅ 1,788964

**ՆՈՐԹՀԸՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ**

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,131,348
ՀԱՍՈՅԹ 1885 ՏԱՐՒՈՅ 898,072

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամեն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև եթէ ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուժած վնասին 15,000,000 Անգլիական Ոսկին կ՚անցնի։

# ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000

## ՄԱՐԻԹԱՅՄ

ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 120,597

Ընկերութիւնս կ՚ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գոմիսիոն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց։

## ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Պէզ ֆապրիգաի Հիւմայունը իչին չուրութը մուգաբբէրէսինէ թեվֆիգըն միւպայեա օլունմագ իւզրէ մէվգըի միւնագասայա գօնուլան իքի խիւզ պին գըյէի ճէտիտ պիրինճի նէվ Ատանա բամուղընըն պէհէր գըյէի ճէտիտի սէֆիզ զուրուշ օն բարայա թալիպի եօգտէխսինտէ օլուպ, իհալէյի գաթիյէսի օն ալթընճը չարշէնպէ կիւնինէ գատար պէհէր կիւն միւնագասայը իճրա գըլընաճաղը վէ իրթէխի բէնտէլիկին կիւնիւ խիւզէ պէչ թենզիլինէ միւսաատէ օլունարագ անտէն սօնրա իհալէի գաթիյէսի փուգու պուլաճաղընտան, թալիպլէրին մէզպուր կիւնլէրտէ մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ուժումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

3 Իլուլ 1887 1097
Նօ. 3 3—3

## ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Իքինճի օրտուի Հիւմայուն մէրքէզ վէ մէվգըլիննտէ պուլունան ասաքիրի Շահանէ իչին միւպայեա օլունաճաղը էվվէլճէ իլան գըլընան էրզագը մայլուժնին իչյու խիլոսը բուժինին նէտոնէի բազար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէկի վէ սէքիզինճի սալը կիւնիւ տախի թէգարրիւր իտէճէք ֆիյաթլէրինտէն խիւզտէ պէչ թենզիլի գապուլ խոլչէճէկի ճիհէթլէ իթթասըն թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ուժումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

3 Իլուլ 1887 1098
Նօ. 4 3—3

ՔՍԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ
ԲՈՒԺԱԿԱՆ ՀՌՉԱԿԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

## ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐ ՋԻԹԼԻԻ

(ՄԵՐՁ Ի ՊՐՈՒՍԱ)

[illegible]

1304 Սէֆէր 11 Թուական կայսերական իրատէով արտօնեալ—Վարձատրեալ Բարիզի, Վիեննայի, Լոնտոնի, Ֆիլատելֆիայի, Անվէրսի, Ֆրանքֆորդի ցուցահանդէսներէն։

Ջիթլիի ջուրն, որ Արեւմուտքէն եկող համանման հանքաջուրերէն գերազանց է, շիշերու մէջ կը դրուի ընդ հսկողութեամբ Տր. Աբիկեանի, պատուիրակ ի դիմաց առողջապահական Վսեմ. նախարարին։ Մէն մի եւ[illegible] կրելու է քննիչ բժիշկին ստորագրութիւնը։ Հասարակութիւնը մերժելու է այն ամեն շիշերն որք չեն կրեր Պետութեան այս երաշխաւորութիւնը։

Այս հանքաջուրին յաջողութիւնն ապահովեալ է մարսողական խողովակին և լեարդին հիւանդութեանց մէջ, աւազախտի եւ յօդացաւի մէջ, շաքարախտի և փամփշտային խօթութեանց մէջ։

Ջիթլի շատ ախորժահամ հանքաջուր մ՚է, սեղանի համար պատուական ջուր մ՚է եւ շատ օգտակար է այն պարագային յորում ջուրերը վարակեալ են համաճարակ հիւանդութեանց ատեն։ Իրենց առողջութեան նախանձախնդիր անձինք ջրեղջներու, Պէնտերու եւ այլ ջուրերէն նախամեծար պիտի համարին Ջիթլին։

Ջիթլին կը դիւրացնէ մարսողութիւնն և կը կանոնաւորէ միւս բոլոր պաշտօնները։ Շատ օգտակար է նաեւ այն պարագային երբ [illegible] մանուկները կաթէ կտրուելու են։

Ջիթլիի ջուրը շաբաթն երկու անգամ կը ղրկուի աղբիւրէն, այնպէս որ կարելի է վստահ լինել թարմ վիճակի մէջ գտնել զայն ի մթերանոցս։

Կ. Պոլսոյ մէջ կը ծախուի ի կեդրոնատեղին Ընկերութեան, 13, Ճէլալ Պէյ խան, եւ ի Մանիֆաթուրա—Բերա, Պ. Ալիբրանտի, դեղարան Տէլլա Սուտա, 169.—Պոլիս, Պ. Մէֆիքի, դեղավաճառ, 24, Եէնի ճամի փողոց.—Ֆ. Թէքֆիրեան, դեղագործ, Ճզալօղլու, Պարսկական դեսպանատան մօտ.—Աքսարայ, դեղագործ ի Վէզնէճիլէր.—Ղալաթիա, Պ. Մավրօպօ, վաճառական, Մալթըզ փողոց, 34.—Պէշիկթաշ, կեդրոնական դեղարան.—Թէրապիա, Սալա Սրօնօբուլօ.—Պէօյիւքտէրէ, Սալվերգի Թէօխարիտի, վաճառական.—Գատը գիւղ, դեղարան Լէոնիտա Անթիփա.—Իւսկիւտար, Սդավրաքի Նուրլօբուլօ, դեղագործ։

Պարապ շիշերը ետ կ՚առնուին։

1054

## ՆՈՐ ԴԱՐՄԱՆ

ԸՆԴԴԷՄ ՊՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԻՒՆԵՐԹՈՒԹԵԱՆ

ՄԱՔՐՈՂԱԿԱՆ ԴԵՂ ՏՐ. ՌՈՒԱԴՄԱՆԻ

Շատ քիչ դեղեր կրնան իրենց յաջողութեան հաստատել բժշկական այսքան բարձր անուններով, որպէս են. բրօֆ. Տր. ֆոն ԼԱՈՒԻԸՐ, բժիշկ Գերմանիոյ կայսեր, բրօֆ. ֆոն ՎԷՍՏՖԱԼ, բրօֆ. ՇՎԱՅՆԻՆԿԸՐ ի Պերլին, բրօֆ. ֆոն ՍՔԱՆՑՈՆԻ ի Վիւրձպուրկ, բրօֆ. ֆոն ՆԻՍՍՊԱՈՒՄ ի Միւնիխ եւ այլն.

Այս վերջինը կը գրէ ինձ, իբր հիւանդանոցին մէջ փորձելէ յետոյ.

«Խնդրեմ տեղեկութիւն տուէք ինձ թէ ո՞ր դիմելու եմ այս սքանչելի դեղին գնելու համար։»

Վիեննայի Բժշկական Մամուլը կ՚ըսէ (1 մարտ 1885).

Տր. Ռոսդման Մաքրողականը արժանի է մեծ բժշկաց բազմաթիւ յանձնարարութեանց.

Այս Մաքրողական միակ ապահով դեղն է ընդդէմ Փորկապութեան։

Մէկ մատնոցի պարունակութեամբ դեղ եթէ ներքսարկես սրբանին մէջ, անմիջապէս արտաքնոց կ՚երթաս։ Եթէ ազդեցութիւնը շատ զօրեղ կամ արագ է, կարելի է խառնել հարկ եղածին չափ ջուր, որպէս զի կանոնաւորուի փորը։

Մանկանց համար ջրախառն Մաքրողականը կը բաւէ սովորաբար։

Մանկանց վտանգաւոր թանչքին առաջքն առնլու լաւագոյն դարմանն է օրն երկու անգամ հանել փորը։

Այլուրոյութեան. Սրբանին մէջ կը խոթեն քիչ մը բամբակ որ թաթխուած լինի ջրախառն Մաքրողականի մէջ (ամբողջ ժամ մը, օրը երկու անգամ)։

Հեմոռոյդ հիւանդութեանց, Թիֆօի, Քօլէրայի եւն. ատեն, մարդ զգուշանալու է ներքին դեղերէ։ Եթէ փորն օրը երկու անգամ ելնէ, լաւագոյն դարմանն է ժամանակ չտալու համար միքրոպներուն որ ծաւալին։

Սառնոտ հիւանդութեան. Ներքսարկութիւն մ՚ընել ճաշէ յետոյ։

Բոլոր [illegible], կաթուած, փսխում, ստամոքսի ցաւ, խիթ, ընչերզծութիւն, փորին անմիջապէս ելնելը մեծ օգուտ կ՚ընէ։ Շատ առատ ճաշէ մը յետոյ մարդ ինքզինքը կը գտնէ ներքսարկութեամբ մը և շատ անգամ վտանգաւոր անմարսութեան մը առաջքը կ՚առնու. Ուղեւորութենէ առաջ և ուղեւորութեան միջոցին, մի՛ մոռնաք այս հանգիստ դեղը։

Նա որ գիտէ մաքրողական ներքին դեղերու շատ գործածութեան հետեւանքներն և մեծ քանակութեամբ ջուր ներսառնելով յառաջ եկած պլտորեր արդիւնքները, ինչպէս են ընդարմացում մեծ աղեաց, սնդուծիւն, արիւներթութիւն, պիտի ընտրէ միշտ այս նոր դեղը, որ ազդեցութիւնը նոյն կը մնայ քանի մը տարի վերջն իսկ։

Դեղատանց մէջ կը ծախուի.

| | | |
|---|---|---|
| 1 ամբողջ շիշ | 1 | մեճիտիէ |
| $1/2$ շիշ | $1/2$ | » |
| $1/4$ » | $1/4$ | » |
| Գրեխը | $1/2$ | մեճիտիէ |

Գործարանին նշանն է դրեխ մը և անունն եղիքեդներուն և շիշերուն վրայ։

### ՏՐ. ՌՈՒԱԴՄԱՆՆ

Մասնագէտ որովայնի խօթութեանց և կանանց հիւանդութեանց

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար միակ կեդրոնատեղին է Տր. Շիմէլ, յԱդրիանուպոլիս.—ի Կ. Պոլիս կը ծախուի Պ. Գասդրօբիւլոսի դեղարանն, Փօսթաքէօյ թիւ 5 և ի Դեղագործական Մթերանոցն, Մեծ փողոց Ղալաթիոյ, 35, Կայարան Պէշիքթաշի Թըրամուէյին։

Տր. Մաքսդրիխի դատարանն 3000 Ֆրանքի տուգանոյ և դատին ծախուց դատապարտեց Պրուէնտման և Գոնսդանդինի խարդախողներն, այս դեղին դէմ գրած ըլլալնուն համար։ Պուար-ը-Տիւքի վերաքննիչ ատեանը բոլորովին հաստատեց այս վճիռը։ (12 մայիս 1885)։ 979

ԺԱՆ ԲՍԱԼԴԻ.— ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՀԿԱՐԱՍԵԱՑ, Նոր բացուած Բերայի Մեծ փողոցը, 127, և ի Գուլէ-Գաբու, Կալաթայի աշտարակին դիմաց և Եազըճը փողոցին քով, Թիւ 657.— ՄԵԾ ՄԸ ԹԵՐԱՆՈՑ ԿԱՀԿԱՐԱՍԵԱՑ, նոյն փողոց Թիւ 657, 659, 661, 663.— Ամէն տեսակ ԿԱՐԱՍԻՆԵՐ.— ՇՔԵՂԱԿԵՐՏ ԿԱՐԱՍԻՆԵՐ, ամէն ճոխութեամբ և կատարելութեամբ.— Ամէն տեսակ ՆԵՐՊԱՍՆԵՐ.— Սրահներու համար ամէն տեսակ օթոցներ, գամաքեններ, թելնաթոռներ, աթոռներ.— Ամէն տեսակ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ և հազար տեսակ ուրիշ կարասիներ.— ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ալ կ՚ընդունուին, կարճ պայմանաժամի համար.— ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ, ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ, ԱԺԱՆՈՒԹԻՒՆ։ Ժան Բսալդի եղբարց վաճառատուն չէ։ 691

## ԿՐԷՆ ՏԸ ԼԷՆ ԹԱՌԷՆ


GRAINE DE LIN TARIN
PARIS
GRAINE DE LIN TARIN
Pharmacien de 1re Classe, ex-interne des Hôpitaux
Place des Petits-Pères, 9, PARIS
PRÉPARATION toute spéciale & NOUVELLE
pour combattre avec succès
CONSTIPATIONS COLIQUES DIARRHÉES
MALADIES DU FOIE
de la VESSIE & des VOIES URINAIRES
HÉMORRHAGIES NASALES
INFLAMMATIONS DES POUMONS, DES INTESTINS
HÉMORRHOÏDES, CLOUS, FURONCLES
DÉPÔT DANS TOUTES LES PHARMACIES & HERBORISTERIES
de France et de l'Étranger
PRIX DE LA BOITE: 1.30

Ազդուապէս կը բուժէ Պնդութիւն, Թանչք, Փայծաղի և միզական գործարանաց հիւանդութիւններ

Պահանջել գործարանիս նշանն և կանաչ վրայ սեւով տպագրեալ կնիքը։

Մէկ տուփին գինն է 1.30 Ֆր.

Կը գտնուի ամէն դեղարանաց մէջ 606

## ՍԻՆԿԷՐԻ

ՃՇՄԱՐԻՏ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Կը գտնուին միմիայն ի Պոլիս, Մահմուտ բաշա, 90,—ի Կալաթա Կլավանի խան, 2,—ի Բերա, Կալաթա Սէրայի դիմաց։
Ժ. ՆԻԷՏԼԻՆԿԷՐ

Վճարման դիւրութիւն

Զգուշանալ կեղծերէն։ 626

## ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՒՑԷՔ

ԲԱՌՏԻՆԱ (Փորսիքա), Բնական հանքաջուր երկաթախառն, թթուային, կազային. ամենազդու դարման ընդդէմ արեան տկարութեան, դեղնութեան, տենդի, ստամոքսի ցաւերու, եւ արեան նուազութենէն յառաջ եկած ամեն հիւանդութեանց։

ՀԱՆՔԱՅԻՆ ԲՈԼՈՐ ՋՈՒՐԵՐԷՆ ԳԵՐԱԶԱՆՑ։

Հանքին տէրն է Ց. Մոլինարի, 2, Պոլօ փողոց, Մարսիլիա։ Կ. Պոլսոյ մէջ գործակալք են ԳԱՌԱՎԻԱ եւ ԲԵՌԴԻՔԻԴԻ, Աստա խան, 4, Մաքսի փողոց, Ղալաթիա։

Կը ծախուի գլխաւոր դեղարանաց մէջ։

621

## ԲԱԲԱԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերպուլի, Միջերկրականի և Օտեսայի միջեւ կանոնաւորապէս բանող

| Անուանք | Թոնոյ | Նաւապետք |
|---|---|---|
| Այա Սոֆիա | 3,000 | Պլէք |
| Արարատ | 2,500 | Ռոճըրս |
| Արքատիա | 2,500 | Քրուիքշանք |
| Լաքոնիա | 2,500 | Ռուիքս |
| Մասէտոնիա | 3,500 | Մորշ |
| Բալմիրա | 2,300 | Ֆօթըրգիլ |

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ՚ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամէն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲՕ Ե՛ ԸՆԿ
536 Գործակալք

## ԱԶԴ ԱՌ ԵՐԿՐԱԳՈՐԾՍ

Ապացուցուած է թէ երկրագործական մեքենայից ամենէն կարեւորն այն է, անժխտելի կերպիւ, որ մարդկային թեւին տեղը կը բռնէ, յարդը պատրաստելու և միանգամայն ցորենը ծեծելու համար։ Այսօրինակ ոչ մէկ մեքենայ, որ անհրաժեշտ և շոգւով է, դեռ մտցուած չէր ի Թուրքիա։

MARSHALL SONS ET CO.



Պ. Պ. ՃՈՆ ԹՈՄԱՍԸՆ և
Ս. ԹԻՒՐՊԱՊԵԱՆ
Ներկայացուցիչք
Marshall Sons et Co.
Առաջին անգամ իրենք բերել տուած են։



Այն անձինք որ կը փափաքին տեսնել այս մեքենային բանիլը, կը հրաւիրուին դիմել առ գործակալսն, Թօմբի խան, Պոլիս, որք պիտի տան հարկ եղած տեղեկութիւնները։ 930 17—26

## ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## „ՏՈՅՉԸՐ ԼՈՅՏ"

Ի ՊԵՌԼԻՆ

Շահաւոր պայմաններով կ՚ապահովագրէ ամեն տեսակ ապրանք, դրամածրարք եւայլն, շոգենաւով եւ առագաստանաւով ուղարկուած։

Ընդհանուր գործակալ Կ. Պոլսոյ
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
791 Թիւ 1 Հավուզլու խան, Պոլիս

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ Ի ՀԱՄԲՈՒՐԿ

Ընդհանուր գործակալ ՀԷՐՄ. ՀԷԼՊԻՆԿ
Կալաթա, Քարանթինա փողոց, Թիւ 9

## ԼԱ ԹՐԱՆՍԱԹԼԱՆԹԻՔ

ՇԱՀԱՒԷՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԷ
ՏՈՒՆԵՐ, ԽԱՆՈՒԹՆԵՐ, ԿԱՐԱՍԻՆԵՐ, ՇԱՐԺԱԿԱՆ
566 ԳՈՅՔ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՊՐԱՆՔ

## ՆԱՒԱՐԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Բաթումի միջեւ կանոնաւորապէս բանող

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անատոլի որ պիտի մեկնի սեպտեմբեր 19ին։

[illegible]

Նաւուղիքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար
Դիմել առ գործակալն
ԹԻՆԻՈԹԷ ԲԸՊՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
536 Մումհանէ փողոց, Թիւ 14

## ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ,
ընդ մէջ Անկլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

## ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ապոլլօ | 2,000 | Լէանտրօ | 4,500 |
| Անճէլօ | 3,000 | Մարէնկօ | 4.300 |
| Ալփօ | 1,300 | Մարտոս | 2,500 |
| Գասսանտրօ | 3,500 | Միլօ | 2,000 |
| Գօլօրատօ | 2,200 | Նէրօ | 2,000 |
| Գոմօ | 2,000 | Օթէլլօ | 5,000 |
| Գէյրօ | 2,600 | Օրլանտօ | 3,000 |
| Գալիփսօ | 2,500 | Օփորթօ | 4,500 |
| Գամէօ | 2,100 | Օթթօ | 2,000 |
| Գաթօ | 2,000 | Բաւիֆիգ | 1,200 |
| Գամի | 2,700 | Բոլէրմօ | 3,200 |
| Ցիտօ | 2,500 | Բաօլօ | 1,700 |
| Ցօռինօ | 1,800 | Րինօ | 2,800 |
| Էրատօ | 2,600 | Րօմէօ | 1,400 |
| Տրագօ | 2,600 | Բէնալտօ | 3,200 |
| Ֆալքօն | 800 | Բօլլօ | 3,000 |
| Ֆիտօ | 1,700 | Բօմանօ | 5,500 |
| Ֆլամինկօ | 1,600 | Բօմէօ | 3.500 |
| Էպիլէգ | 5,500 | Սալէրնօ | 4,000 |
| Հիդալգօ | 2,200 | Սարֆօ | 2,000 |
| Հօզօ | 1,800 | Սիլվիօ | 2,000 |
| Հրոմէօ | 2,200 | Սորէնթօ | 4,300 |
| Համկօ | | Թասսօ | 1,200 |
| Հէրօ | 2,000 | Թ. Ուիլսըն | 3,600 |
| Հիտալկօ | 3,000 | Թիկրիս | 1,300 |
| Հումպէր | 1,200 | Թօլէտօ | 2,800 |
| Ճիլօ | 2,800 | Քոնտօ | 2,600 |
| Քէլլօ | 2,000 | Եէտտօ | 1600 |
| Քօմօ | 2,200 | Զէնօ | 3,000 |
| Լէօ | 2,000 | Զէրօ | 44,0 |

Թէյլօ շոգենաւը, նաւապետ Հէյգ, ընդհանուր վաճառքով Հըլէն մեկնած է ամսոյս 7ին և 22ին աստ կ՚սպասուի։

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւններ կան։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԻՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ
851 խան Ղալաթիա

## ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերպուլի և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւք

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Քանոքուս | 4200 | Սֆինքս | 3000 |
| Ֆէրոս | 4000 | Օսայրիս | 3000 |
| Օսմանլի | 4000 | Նէբթիս | 3000 |
| Սեսոստրիս | 3250 | Բէրա | 300 |
| Թիպս | 3250 | Լոգիոս | 800 |
| Մակտալա | 3250 | Օլինտա | 800 |
| Մարիօթիս | 3250 | Սէթի | 700 |

Օսայրիս շոգենաւը, նաւապետ Իսպըրսրուք, ամսոյս դէպի 19ին Լիվրբուլէն աստ կ՚սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈԼ և ԸՆԿ.
Ուիթալ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ
841 31, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

## ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվերպուլի և Արեւելեան միջեւ.

| Անուանք | Թոնոյ | Անուանք | Թոնոյ |
|---|---|---|---|
| Ալճէրիան | 2500 | Ֆավոնեան | 3700 |
| Ալզասիան | 2500 | Ֆլամինեան | 3700 |
| Անտալուզեան | 2500 | Ֆլավեան | 3700 |
| Աթէնեան | 2500 | Իպէրիան | 5500 |
| Արապիան | 3700 | Իլիրիան | 5500 |
| Պավարիան | 6000 | Իսթրիան | 5500 |
| Պուլկարիան | 6000 | Լէսպիան | 2200 |
| Քասթելեան | 800 | Լիկուրեան | 2500 |
| Սայրէնեան | 2000 | Լիտեան | 800 |
| Տուրքոյ | 700 | Օփորթօ | 700 |
| Էճիփշըն | 3700 | Բէրսիան | 3800 |
| Ֆաթիան | 3700 | Վալենսիան | 6800 |
| Ֆալէրնիան | 3700 | Վիրճինեան | 6800 |

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 1, Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ. Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք.
Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վահման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլերի.
Շիրա, Ա. Մ. Մավրոկորտատօ.
Զմիւռնիա, Պ. Ուիթօլ և ընկ.
846

Արտօնատէր Ս. ՅԱՄԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 12 Մայիս (Ն. Տ.) 1887, մինչեւ նոր տնօրինութիւն

### Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

| | 4 | 6 | 8 | 10 | 2 | 12 | 14 | 16 | 18 | 20 | 22 | 24 | 26 | 28 | 30 | 32 | 34 | 36 | 38 | 40 | 42 | 44 | 46 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաւօտ | | | | | | | | | | | Իրիկուն | | | | | | | | | | | | | | |
| | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. |
| Կ. Պոլիս | 6 15 | 6 49 | 7 17 | 7 45 | 8 15 | 8 41 | 9 10 | 10 11 | 10 37 | 11 10 | 11 38 | 1 49 | 2 17 | 2 50 | 3 46 | 4 14 | 4 47 | 5 16 | 5 49 | 6 18 | 6 44 | 7 2 | 7 31 | ... | ... | ... |
| Գում—գաբու | 6 27 | 6 58 | 7 26 | 7 54 | 8 26 | 8 50 | 9 19 | 10 20 | 10 46 | 11 19 | 11 47 | 1 58 | 2 26 | 2 59 | 3 55 | 4 23 | 4 56 | 5 25 | 5 58 | 6 27 | 6 53 | 7 11 | 7 40 | ... | ... | ... |
| Եէնի—գաբու | 6 32 | 7 2 | 7 30 | 7 58 | ... | 8 54 | 9 23 | 10 24 | 10 50 | 11 23 | 11 51 | 2 2 | 2 30 | 3 3 | 3 59 | 4 27 | 5 | 5 29 | 6 2 | 6 31 | ... | 7 15 | 7 44 | ... | ... | ... |
| Տավուտ փաշա | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |
| Սամաթիա | 6 39 | 7 8 | 7 36 | 8 4 | ... | 9 | 9 29 | 10 30 | 10 56 | 11 29 | 11 57 | 2 8 | 2 36 | 3 9 | 4 5 | 4 33 | 5 6 | 5 35 | 6 8 | 6 37 | ... | 7 21 | 7 50 | ... | ... | ... |
| Եէտի—գուլէ | 6 44 | 7 | 7 40 | 8 9 | 8 37 | 9 4 | 9 32 | 10 34 | 10 59 | 11 33 | 12 | 2 12 | 2 39 | 3 13 | 4 9 | 4 36 | 5 11 | 5 38 | 6 13 | 6 40 | 7 2 | 7 24 | 7 54 | ... | ... | ... |
| Մագրիգիւղ | 6 57 | 7 24 | 7 51 | 8 21 | 8 52 | 9 16 | ... | 10 46 | ... | 11 45 | ... | 2 24 | ... | 3 24 | 4 21 | ... | 5 23 | ... | 6 25 | ... | 7 14 | ... | 8 5 | ... | ... | ... |
| Այ Ստեֆանօ | ... | 7 33 | ... | 8 30 | 9 4 | 9 25 | ... | 10 55 | ... | 11 55 | ... | 2 33 | ... | ... | 4 30 | ... | 5 32 | ... | 6 34 | ... | 7 24 | ... | ... | ... | ... | ... |
| Քիւչիւք Չէք. | ... | ... | ... | ... | 9 14 | ... | ... | ... | ... | 12 3 | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 7 32 | ... | ... | ... | ... | ... |
| | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |

### ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

| | 3 | 5 | 7 | 9 | 11 | 13 | 15 | 17 | 19 | 21 | 23 | 25 | 27 | 29 | 31 | 33 | 35 | 37 | 39 | 1 | 41 | 43 | 45 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաւօտ | | | | | | | | | | Իրիկուն | | | | | | | | | | | | | | | |
| | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. վ. | ժ. |
| Քիւչիւք Չէք. | ... | 6 40 | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 1 40 | ... | ... | ... | ... | ... | ... | ... | 6 2 | ... | ... | ... | ... | ... | ... |
| Այ Ստեֆանօ | ... | 6 49 | ... | 7 45 | ... | 8 40 | ... | 9 43 | ... | 11 10 | ... | 1 49 | ... | 2 50 | ... | ... | 4 47 | ... | 5 49 | 6 13 | ... | 7 3 | ... | ... | ... | ... |
| Մագրիգիւղ | 6 31 | 6 59 | 7 27 | 7 55 | 8 23 | 8 51 | ... | 9 53 | ... | 11 20 | ... | 1 59 | ... | 3 | 3 56 | ... | 4 57 | ... | 5 59 | 6 27 | ... | 7 13 | ... | ... | ... | ... |
| Եէտի—գուլէ | 6 43 | 7 11 | 7 39 | 8 8 | 8 35 | 9 4 | 9 38 | 10 5 | 11 4 | 11 32 | 1 27 | 2 11 | 2 44 | 3 12 | 4 8 | 4 41 | 5 10 | 5 43 | 6 12 | 6 42 | 7 1 | 7 25 | 7 53 | ... | ... | ... |
| Սամաթիա | 6 47 | 7 15 | 7 43 | 8 12 | 8 39 | 9 8 | 9 42 | 10 9 | 11 8 | 11 36 | 1 31 | 2 15 | 2 48 | 3 16 | 4 12 | 4 45 | 5 14 | 5 47 | 6 16 | ... | ... | 7 29 | 7 57 | ... | ... | ... |
| Տավուտ փաշա | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |
| Եէնի—գաբու | 6 53 | 7 21 | 7 49 | 8 18 | 8 45 | 9 14 | 9 48 | 10 15 | 11 14 | 11 42 | 1 37 | 2 21 | 2 54 | 3 22 | 4 18 | 4 51 | 5 20 | 5 53 | 6 22 | ... | ... | 7 35 | 8 3 | ... | ... | ... |
| Գում—գաբու | 6 57 | 7 25 | 7 53 | 8 23 | 8 49 | 9 18 | 9 52 | 10 19 | 11 18 | 11 46 | 1 41 | 2 25 | 2 58 | 3 26 | 4 22 | 4 55 | 5 24 | 5 57 | 6 26 | 6 52 | 7 10 | 7 39 | 8 7 | ... | ... | ... |
| Կ. Պոլիս | 7 5 | 7 33 | 8 1 | 8 31 | 8 57 | 9 26 | 10 | 10 27 | 11 26 | 11 54 | 1 49 | 2 33 | 3 6 | 3 34 | 4 30 | 5 3 | 5 32 | 6 5 | 6 34 | 7 | 7 18 | 7 47 | 8 15 | ... | ... | ... |
| | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... | ... |

Փոքր ծրարներն անխտիր կ՚ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրի գիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջև բանող կառախմբոց մէջ միայն թիւ 1 և 2 կառախմբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վակոններ. միւս կառախումբերն ունին միայն Բ. և Գ. կարգի վակոններ։ 576